

ԴՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1902

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

U. P. S. 1902
Adresse: ?
REDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԹԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ. Յ. Գ. ԲԻՐՈՅԵ
ԳՐԱԴԱՐԱՆ
A. R. F. BURO
LIBRARY

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԽԱՐԽԱՓՈՒՄՆԵՐ

Օսմանեան „ազատամիտների“ համաժողովը մի նոր ապացոյց տւեց այն ճշմարտութեան՝ որ Երիտասարդ Թիւրքիան քաղաքականապէս գտնուում է դեռ իր մանկութեան շրջանում:

Առաջին կօնգրէսն էր իր տեսակի մէջ և, կարելի է ասել, կազմակերպական ամենախոշոր քայլը՝ այդ „կուսակցութեան“ տասնեակ տարիների ազմկայող, բայց և դժգոյն գործունէութեան ընթացքում: Այդ քայլը ևս, ըստ երևոյթի, դատապարտուած է մնալու սոսկ պատմական մի իրողութիւն, առանց շոշափելի հետեանքների: Երկարատե, տեղւոյն պատրաստութիւններ, հեղինակաւոր կոչ ու յորդորներ, աղմուկ ու իրարանցում՝ օսմանցի բոլոր „ազատամիտների“ շրջանում — և գործնական արդիւնքը՝ ոչինչ: Լեռը մուկ ծնեց: Արտաքին տպաւորութիւնն անգամ բաւական խղճալի է: Եւրօպական մամուլի մէջ տեղ-տեղ միայն յիշատակեց կօնգրէսի մասին, այն ևս կատարեալ անտարբերութեամբ: Եւ եթէ չլինէին Աբդուլ Համիդի տխար մեքենայութիւնները, եթէ չլինէր արգելման ժամանակաւոր հրամանը Ֆրանսիական կառավարութեան կողմից, իրողութիւնը թերևս անցնէր բոլորովն աննկատելի:

Եւրօպան երբեմն շատ էր չափազանցնում Երիտասարդ Թիւրքիայի ուժը, այժմ, ըստ երևոյթի, հիասթափուած է: Նա տեսնում է, որ այդ ուժը աւելի երևակայական է, քան իրական: Մի քանի տարի շարունակ ակամատես էր նա այդ իբր-կուսակցութեան առաջնորդների անարգ շահատակութիւններին, տեսնում էր անարժան կամարժաններ, նւաստացուցիչ իրաւախոհութիւններ, տեսնում էր սկզբունքի բացակայութիւն, մտաւոր ու բարոյական լիակատար սնանկութիւն...

Մենք ևս տեսնում էինք: Մենք էլ խորապէս հիասթափուածներից էինք: Այնուամենայնիւ մենք առաջիններն էինք գուցէ, որ ողջունեցինք կօնգրէսի գաղափարը: Առաջին անգամը՝ օսմանեան կայսրութեան այլադաւան ու դժգոհ տարրերի ներկայացուցիչները պիտի համախմբէին իրար ճանաչելու, իրարու հասկանալու և „համերաշխ գործունէութեան ծրագիր մշակելու“: Առաջին անգամը՝ այդ տարրեր ուժերը մէկ կօնգրէսի մէջ ի մի գումարելով՝ պիտի ցոյց տային Եւրօպային և պաշտօն-

նական Թիւրքիային, որ նրանք իրենց այլադաւանութեամբ հանդերձ ներկայացնում են բուն բողոքի մի ներդաշնակ ու ահաւոր հոսանք, ուղղուած միևնոյն բռնապետութեան դէմ:

Եւ միթէ՞ օսմանցի բազմաթիւ պատւիրակների շարքերում չէին գտնւի լուրջ, խելահաս մարդիկ, որոնք պատմութեան և իրականութեան գիտակցութիւնն ունենալով՝ պաղարիւն ու օրիելկով փնտաւանութեամբ իրական համաձայնութեան գային մեզ հետ՝ բոլորիս համար առաջնակարգ ու կենսական մի խնդրի մէջ, որպիսին է արդի ու ժամի տապալուումը և մանաւանդ դրա համար ձեռք առնելը միջոցները...

Ահա թէ ինչ նկատումներից մղուած՝ մենք փութացինք պատասխանել և ղեկեցինք մեր խմբագրութեան պատւիրակներին: Մի անգամ ևս կամեցանք — անկեղծօրէն, ուղղամտութեամբ — շեշտել համերաշխութեան այն գաղափարը, որ քարոզել ենք տասնեակ տարուց ի վեր և որը վաղ թէ ուշ պիտի յաղթանակէ, չնայած ահռելի խոչընդոտներին:

Եւ եթէ միևնոյն զգացումներով գէթ մասամբ տագորած լինէր Երիտասարդ Թիւրքիան, կօնգրէսը չէր ունենայ, անշուշտ, այն ցաւալի վախճանը, որ նա ունեցաւ: Կօնգրէսին ներկայացող հայ պատգամաւորները զգացին իրենց պալ ու անհիւրընկալ մի մթնոլորտում: Առաջին օրից իսկ վրդովեցրեց նրանց արևելեան մօրալին յատուկ օսմանցի ղեկավարների նենգամիտ ընթացքը և նրանց ծայրայեղ անհամբերողութիւնը քրիստոնեաների վերաբերմամբ: Այդ անհամբերողութեան ամենաընդգիծ փաստն էր՝ մակեդոնացիներին հրաւիրելը և դրա համար բերած անմիտ պատճառաբանութիւնը՝ թէ „մակեդոնացիք խռովարարներ են“... Խլամի „ազատամիտ“ երկրպագուները այնքան հեռու են գնում, որ մինչև սկ մակեդոնացիներին իբրև այդ չեն ճանաչում և չեն ուղղում ընդունել նրանց դատի գոյութիւնը:

Շատ աւելի զեղող (°) ու պատկառոտ է Երիտասարդ Թիւրքիայի վերաբերումը դէպի հայերը: Կօնգրէսից առաջ և նրա ընթացքում տեղի ունեցած մի շարք փաստերը վկայում են, թէ որքան մեծ կարևորութիւն էին տալիս օսմանցի ազատամիտները հայ պատգամաւորութեանը և հայկական շարժման ընդհանրապէս: Եւ հէնց այդ է պատճառը, որ նրանք անսովոր ձիգ էին թափում՝ à tout prix քննելու հայկական հարցի,

հայոց ուրոյն պահանջների գոյութիւնը, որը իբր թէ սպառնում է նրանց փայփայած կայսրութեան ամբողջութեանը: Ուշագրաւ է և միանգամայն ըմբոստեցուցիչ թէ ինչպէս օսմանեան լիբերալիզմի շիտակ ու արդարամիտ հռչակած ներկայացուցիչներն անգամ զարտուղի ճանապարհներով, մանաւազապատ դարձածներով ձգնում էին ձուլել «ընդհանուր ունեւորների» կամ Միթհագրական մեռելածին «Սահմանադրութեան» մէջ ուրոյն ժողովրդային մի դատ, որ սրբագործած է միջազգային դաշնագիրներով և հարիւր հազարաւոր զոհերի արիւնով:

Ահա թէ ինչով էր զբաղւած Երիտասարդ Թիւրքիայի անդրանիկ համաժողովը: Մուսացած ներկայի հրատապ խնդիրները, մի կողմը թողած աւերիչ ու յոշոտող բռնակալութեան դէմ ձեռք առնելիք միջոցները՝ նա մտածում էր միայն ապագայ երանելի «սահմանադրութեան» մասին և միջոցներ էր խորհում՝ չէզոքացնելու կամ իսպառ կլելու «անջատական» տարրերը, ջնջելու 61-րդ յօդւածն ու Մայիսեան մեծօրանդումը և տարածելու հայերի և ուրիշ քրիստոնէաների վրայ օսմանեան քաղաքացիութիւնն ու ազգայնութիւնը:

Այդ զապրելի մեքենայութիւնները դարձան իվերջոյ անհանդուրժելի և հայ պատգամաւորները ապարդիւն սեպելով իրենց ներկայութիւնը մի այդպիսի հողմաղաց ժողովում, անհնարին գտնելով ա յ ժ մ է ա կ ա ն ի ը ն դիրներն արծարծումը՝ խմբով թողեցին դահլիճը:

Վոնգրէսը վիժած կարելի է համարել: Հայերից յետոյ անջատեց նաև մահմէդական ներկայացուցիչների մի ստուար փոքրամասնութիւն, որը իրեն գլուխ ունենալով «պօղտիսիվիստ-քաղաքագետ» Ահմէդ Նիզամի ինքընքը թշնամի է յայտարարում եւրօպական միջամտութեան: Մնացածները կազմեցին մնայուն մի կօմիտէ, որը, ըստ իր սեփական արտայայտութեան, պիտի կարգադրէ «Սահմանադրութեան» իրագործումը... Թէ ի՞նչ միջոցներով — Ալլահը միայն գիտէ: Իրողութիւնը այն է, որ թիւրք պաշտամիտները իրենց աւանդական սովորութեան համեմատ՝ այսօր ևս ժխտում են լռելեայն կամ բացարձակօրէն — ղենւած պայքարի սկզբունքը: Հեռու բռնութիւնը, հեռու յեղափոխութեան արհաւիրքները, կորստի և առաջադիմութիւն — ահա մեր մոլեգին հակասութեան կանգնանքների գործունէութեան թէ նպատակը և թէ տակտիկան... Եւ ապա մշտադաւար քաղաքական երեխաները իրենց տհաս մտքի յաւիտենական խարխափումներով դեռ յանդիմութիւն ունին հաւատացնելու արար աշխարհին, թէ ամբողջ մարդկային պատմութիւնն է այդպէս ընթացել թէ ապստամբութիւնները աղետաբեր են եղել միշտ, թէ բռնի ուժը երբեք ազատարար դեր չէ խաղացել պատմութեան ընթացքում... և այլ ոչ, երիտասարդ Թիւրքիան չէ առաջադիմում, նա չէ ուսանում: Իբրև մի ծոյլ ցեղի ներկայացուցիչ՝ նա իւրացնում է արևմտեան ծոյլ վարդապետութիւնները

միայն, որոնք թիւրքական պաշտութեան շարժումը իրախուսելու տեղ՝ անդամալուծում են նրան: «Կարգի և խաղաղ առաջադիմութեան» դօքտրինը ունի ժամանակակից եւրօպայի մէջ իր լիակատար գոյութեան իրաւունքը, այնինչ՝ տաճկական իրականութեանը պատաստելով՝ նա հանդիսանում է մի այլանդակ կարիկատուրա:

Թիւրքամտութեամբ ու տարօրինակ մի յամառութեամբ մեր «պաշտամիտները» շարունակում են ծանուցանել իրենց «խաղաղ տակտիկան»՝ նոյնիսկ այսօր, երբ իրենց, թիւրքերի դէմ կազմակերպւել է իվերոստ մի անօրինակ հայածանք, երբ ելքըրդի բռնաւորը շարունակ աքսորում կամ խեղդոտում է հարիւրաւոր մեծ ու փոքր թիւրք պաշտօնեաներ: Երբեք լրտեսութեան սխտէմը այնքան հրեշաւոր ծաւալ չէ ընդունել, ինչպէս այսօր, թիւրքաց մայրաքաղաքում: Քաղաքի ոստիկանների թիւր — Frankfurter Zeitung-ի թղթակցի վկայութեամբ — այժմ մտաւորապէս 10,000-ի է հասնում: Նոյն թղթակցի ասելով, կայսերական պալատում հինգ բիւրօ է հաստատւած՝ «վտանգաւորների» վասին տեղեկութիւններ հաւաքելու և հրահանգներ արձակելու համար: Չըկայ այսօր և ոչ մի մինիստր, որ սղլտ լինի գաղտնի հսկողութիւնից:

Այսպիսի դժոխային պայմանների մէջ սպասելի էր, որ Երիտասարդ Թիւրքիան աւելի համարձակ ու աւելի վճռական ուղղութիւն ընդունէր. թուում է, թէ տէնօրի անողորմ քաղաքականութեան դիմաց՝ նա պիտի կարծ կապէր «կարգի ու առաջադիմութեան» բանդագուշանքների հետ, պիտի հետևէր հայերի ու մակեդոնացիների օրինակին, պիտի կազմակերպւէր ու կուէր...

Թուում է թէ սուլթանական հալածանքների այդ բազմաթիւ գոհերը, որոնց շարքերում կան, անշուշտ, բարձր առաքինութիւնների տէր մարդիկ, պիտի ստուարացնէին դժգոհների, դիտակից ըմբոստների բանակը և պիտի ուժեղացնէին այդպիսով օսմանեան «պաշտամիտ կուսակցութիւնը»: Այդ բնական երևոյթը տեղի չի ունենում՝ սակայն և Երիտասարդ Թիւրքիան այսօր, ինչպէս առաջ, ներկայացնում է տարբեր ու անորոշ ձգտումների մի քաօս, բայց երբեք «կուսակցութիւն»:

Այո: ցեղական-անտրօպօլոգիական խորունկ պատճառները — մի ֆատալ ու ողբալի իրողութիւն է այդ — ճակատագրապէս անդրադառնում են թիւրքաց ամենաազատամիտ սերնդի վրայ ևս: Երիտասարդ Թիւրքիան իր աշխարհայեցողութեամբ, իր ամբողջ հօգեկան կազմով մի զոհ է իր ցեղի դարաւոր ու ահոնելի անշարժութեան: Նրա մէջ չկայ ընկերական այն հրաշագործ բնազդը, որը առաջնորդում է մի ազգի ճնշած ու բողբոջ ընդհանրութիւնը անդուլ մաքառման ճանապարհով դէպի հասարակական կենցաղի բարձրագոյն ձևեր: Անդունակ ինքնաբերաբար կազմակերպւելու գոտաբացասական գործողութիւնները — թալանի և սպանու-

Թիւններէ համար — այդ ցեղը անընդունակ է հանդիսանում նոյնիսկ յանձին իր ամենահասուն ու առաջադէմ զաւակներէ՝ կազմակերպելու յանուն դրական գործի, յանուն կուլտուրական-ազատագրական պայքարի։ Այս մի ուրիշ աղետաբեր կողմ։ բացակայում է տաճիկներէ մէջ ամէն մի ազատագրական շարժման համար անհրաժեշտ շ ա ղ ա խ ը, նրա սրբագործող ուժը — գ ա ղ ա փ ա Ր ը։ Անօթի ստամոքսն ու դատարկ գրպանը յեղափոխիչ ուժեր են, անտարակոյս, բայց նրանք բաւական չեն դեռ։

Օտոսմանեան լիբերալիզմը ի ր ո ղ ու թ ի լ ն չ է տակաւին, այլ սոսկ տ ե ն դ ե ն ց ի ա։ Երիտասարդութիւնը շարժումը մնում է կտրատուած, բաժան-բաժան, երկնոտ ու վարանոտ, անգոյն ու ամուլ։ միշտ ուտոպիստ, զառանցող, — երբէք իրականութեան վրայ զգաստ աչքով նայող միշտ Ֆ ր ա Վ ի ներկայացուցիչ — երբէք կ ե ն դ ա ն ի գ ո Ր ծ ի։ միշտ ձրի յոխորտացող — և երբէք խածնող։ նա յամառում է անհատական բողոքի շրջանում, — անհատներն էլ մի մի կենտրոնախոյս ու անտագոնիստ ուժեր են, որոնցից իւրաքանչիւրը «փրկիչ» է ուզում լինել։ Մի մի զօրապետներ, առանց զինւորների...

Ակեպտիկ էինք երիտասարդ Թիւրքիայի մտաւոր հասունութեան և քաղաքացիական առաքինութիւնների վերաբերմամբ։ Պարիզի համաժողովը եկաւ, դժբախտաբար, աւելի ևս ամրապնդելու մեր սկեպտիկութիւնը։

Ե Ի Ր Օ Պ Ա Ն Ե Ի Ր Օ Պ Ա Յ Ի Դ Ե Մ

Երկու Եւրոպա կայ։ Եւրոպա՝ Ախիլէսի ու Նիկոլայի, Բիսմարկի ու Կրիսպիլի, Սուլզերիի ու Հանսոտոյի, ուրիշ խօսքով՝ դիպլոմատիական Եւրոպա, որ մի Աստուած ունի — ուժը, մի աւետարան — շահը, մի սրբութիւն — գահը։

Եւ դրան կից մի այլ Եւրոպա — վաղւան Եւրոպան, նա որ ունի ցնորք, իդէալ, երազներ, որ ունի այլ Աստուած — արդարութիւնը, մի այլ աւետարան — հաւատարութիւնը, մի այլ սրբութիւն — ազատութիւն։

Մէկը ուժեղ է տակաւին, միւսը դեռ թոյլ։ Առաջինը՝ ծնունդ է անցեալի, յենւած դարերի վրայ, ձեռքին բռնած գահը, եկեղեցին, կապիտալը։ Երկրորդը՝ ժառանգ ապագայի, տարած արշալոյսի հրապոյրներով, ձեռքին բռնած տապար, գրիչ ու նշտար։ Մէկը կանգնած գերեզմանի մօտ, դաժան, երկիւղը սրտում, կնճիռները ճակատին։ միւսը թէև թոյլ բայց կենսունակ, ինչպէս նորածին մանկիկ, ժպտագէտ, յոյսը սրտում, ճակատը փայլատակուն...

Առաջինը մեր թշնամին է, հայեր, երկրորդը՝ մեր բարեկամը։
Ամբողջ 50 տարի այդ թշնամուն դիմեցինք։ նապօ-

լէծին դիմեց Զէյթունը՝ 1862-ին. Բիսմարկեան Բերլինին հայոց պատրիարքը՝ 1878-ին, արեան այն օրերին, երբ օտար զօրքերի մուտքը հայկական նահանգները՝ հայութիւնը դէպի ապստամբութիւն էր կոչում. նրան դիմեց հայ պատւիրակը, հայ պատգամաւորութիւնը, հայոց մամուլը, նոյնիսկ երբեմն հայ կուռղը։

Եւ խաբէց։ Այդ հմայիչ, ուժի և մեծութեան ծիրանով պատած կախարչը, երբեմն այնքան մեծահոգի, իդէալիստ, գաղափարական՝ երբ շահերի պատահական զուգահիւսութիւնը այդպէս է թելադրում, շարունակ և ամէն անգամ խաբէց, այո՛, հայերին. կամ խոստումներով — անիծւած խոստումներ — նա յետաձգեց ճգնաժամի ճակատագրական լուծումը, և կամ, որ վատթարագոյնն է, կաբինետի մէջ փակեց այն խնդիրը, որ ստեղծուած էր հրապարակի վրայ ապրելու, մի խնդիր, որ չէր կարող և երբէք էլ չէր կարող ապրել դոնփակ կաբինետներում, դիպլոմատի թղթածածկ սեղանի վրայ, այլ միայն արևի տակ, ժողովրդի ծոցում, այն հողի վրայ, որ թանքի տեղ՝ արիւնով է սնւած, այն սրտերուս, որտեղ հաշի տեղ դրած է կրակ, յոյս, տէնչ, իդէալ...

Եւ մենք փորձեցինք ներս թափանցել այդ բոլոր մական աշխարհը՝ անսիրտ, անխիղճ, պատմութիւնից չամաչող և գաղափարից զզուող կաբինետները, իբրև քաղաքական մոլորաց կան, իբրև աղերսող, իբրև ստրուկ ժողովրդի անզօր թարգման։ Եւ դիպլոմատիան՝ միշտ իրեն հաւատարիմ, օրօր կարգաց մեր գլխին, խաբէց, ձեռնունայն ճանապարհ դրեց մեզ, յաճախ ծաղրի առնելով մեր արտասուքը, քրքիջ արձակելով այն երկրի երեսին, ուր տիրում էր արիւն, վիշտ, արտասուք, տառապանք...

Բայց ահա նոր Եւրոպան, վաղւան, իդէալների Եւրոպան, որ բարձրանում է հորիզոնի եզերքին, ինչպէս մշուշապատ լեռան գագաթն՝ ջերմացնող ճառագայթների դիմաց. կանգնած մի պատանդանի վրայ, որ չէ շինւած թղթից և թագրիւններից ու շաղախուած արտասուքով, ձեռնակերտ աղերսող Հայաստանի, այլ մի այլ պատանդանի վրայ, որ կառուցուած է դիակներէ, շաղախուած զոհերի և հերոսների արիւնով, կերտուած բողոքի, սպանալիքի, պայքարի վանգաւածով, ձեռակերտ նոր, կուռղ Հայաստանի։

Սրբազան պատանդան։ Օտարի կամքից չէ կախուած նրա բարձրութիւնը, քարով և կիրով չէ շինւած նա. նրա մէջ քարը՝ հերոսի դիակն է, կիրը՝ յեղափոխականի արիւնը։ Եւ բարձրացած այդ սրբազան, նոյնիսկ թերահաւատներին սիրտ տուող բոլոր գի վրայ՝ իդէալների Եւրոպան ձայն է գցել ամբողջ աշխարհը, ձայն՝ բողոքի, ձայն՝ ոգևորութեան, բողոք՝ ընդդէմ դիպլոմատիական նենգութիւնների, ոգևորութիւն՝ ընդդէմ խեղդող անտարբերութեան։

Երեկ այդ բողոքը չկար:

Այսօր նրանն է հրապարակը:

Եւ այդ հրապարակի վրայ այսօր հայոց հարցը ունի այնպիսի մեծանուն բարեկամներ, ինչպէս՝ Գասսի, Պրէսանտէ, Ժօրէս, Անատօլ Փրանս, Կլէմանսօ, Վանդալ, Ա. Լըրուս-Քօլիեօ, Քիյար, Վիկտօր Բերար, Դիտտուրնէշ Գօհիէ, Զէմբա, Ռուանէ Եւ Դը Կօնտանսօն Էլն.—Փրանսիայի ա յ ու մ Բրայս, Ստէվէնսօն, Մակ Կօլ, Դիլօ, Ռամսէի, Բիտ—Անգլիայի ա յ ու մ Էլանդէրվէլը, Ռէկլիւ, Դընիս, Լօրան, Եանսօն, Պ. Էրրէրա Է Պիքար — Բէլգիայի ա յ ու մ Էլիրիօվ, Լամպրէխտ, Բէրնշտէյն, Բէքէլ, Կառտսկի, Լէպսիուս, Լարդէն, Լէհման, Բօրբախ Էլն.— Գերմանիայի ա յ ու մ—Վան Կօլ—Հօլանդիայի ա յ ու մ Բայեր—Դանիայու մ Լօմբրօզօ, Ֆէրրի, Զիպրիանի, Ֆէրրէրօ, Գարիբալդի—Իտալիայի ա յ ու մ Է ուրիշ շատերը Շվէյցարիայի ա յ ու մ, ինչպէս Է այլ երկրներու մ:

Եւ այդ բոլոր բարեկամները, պատկանող ոմանք պարլամենտական շրջանին, ոմանք գրողների դասակարգին, միւսները՝ լոկ իբրև պրօպագանդի ներկայացուցիչներ, ոմանք իբրև պետական անձինք, կամ գիտութեան սպասաւորներ, միակամ Է միաբերան, թէև յաճախ անձանօթ մէկը միւսին, հուժկու ալիքներով տանում Է տարածում են այն դատը, որ արդարութեան դատն է, որ ազատութեան երջանիկ օրերին հայկական լեռնավայրում պիտի մարմնացնի քաղաքակրթութեան բարձր գաղափարները, հեռու քաղաքական բացառիկ, նեղ, անցողական ծրագիրներէց . . .

Անդամ անցան թիւրի մացութեան տխուր օրերը, երբ ստրուկ հայաստանը իր ազատութիւնը սպասում էր օտարից, Է այն քաղաքական աղերսագրերի միջոցով Քարս մտածողութեան շրջանն էր դա: Մենք նրան պատմութեան յանձնեցինք: Նա գոյութիւն ունի արխիւների մէջ, բայց ոչ կուող Է տանջող երկրում: Եւ յետոյ:

Եւ յետոյ մի այլ պարզաբանութիւն, որ աւեց մեզ տասն տարւայ կուի տրամաբանութիւնը, քաղաքական գրութեան տխուր, անհաճոյ, բայց իրական կազմը — այն, որ առանց Եւրօպայի միջամտութեան դժւար, նոյնիսկ անկարելի է ստեղծել ինքնավար Հայաստան: Մենք գեռ շատ հեռու ենք այն երջանիկ, հրապոյրներով լի, Է այնքան գրաւիչ օրերից, երբ սօցիալական մեծ յեղափոխութիւնը կը ջնջէ քաղաքական Եւրօպան, հիմնելով նրա աւերակների վրայ նոր Եւրօպան, իբրև մի դաշնակցութիւն, ազատ սպանիչ Է անվերջ թշնամութեան ճիրաններից: Սպասել այդ օրերին, կը նշանակէ սպանել արիւնքամ հայաստանը: Պատմութիւնը Է կեանքը մեր վզին դրել են ոչ թէ սպասելու խաչը, այլ կուի խաչը:

Եւ այդ կուիլ չի սպասուի: Նա թելագրում է տարաբախտաբար հաշի առնել իրերի վիճակը, որ մի օր հանդէս է գալիս իբրև ուսական քաղաքականութիւն

Երասխի աիբրին, միւս օրը՝ իբրև գերմանական կօլօնիաներ՝ Փոքր-Ասիայի սահմանների վրայ, մի ուրիշ անգամ իբրև անգլօ-ուսական միջուկ, ու մի այլ տեղ իբրև Եւրօպայում տիրող թագաւորական տների գոյութեան խնդիր, որ հրապարակ է նետել գաղտնի դաշնագրերի մի անվերջ շղթայ, իբրև անհաշտ ոտնի ազատագրական ամեն մի շարժման, լինի դա Հայաստանում թէ Լեհաստանում, Բալկանի վրայ, Ֆինլանդիայում . . .

Սակայն հայը, անկազմ թէև ողևոր, ուժասպառ թէև տոհուն, անկարող է միաժամանակ կուի վարել թէ ուղղակի թշնամու դէմ, որ Թիւրքիան է, Է թէ անուղղակի հակառակորդի դէմ, որ քաղաքական Եւրօպան անունն է կրում: Ստամբուլեան բռնապետութեան դէմ— հայը պիտի կանգնի ինչպէս թուրք փրփրած ալիքների դէմ, կուրծք տալով թշնամու գնդակին, բանտին, սուրին Է դաւերին: Իսկ Եւրօպայի դէմ, բռնապետութեան դաշոյնը խարտոզ Եւրօպայի դէմ՝ մենք պիտի կանգնեցնենք մի այլ Եւրօպա, վաղւան Եւրօպան, նա, որ ինչպէս պահպանաուիւծ, իրօք տարւած է արդարութեան գործով:

Փաստերը քիչ չեն: Եւ նշանները՝ շատ սփոփիչ:

Այդ նօր հոսանքը, հայասէր բարեկամների միջազգային դաշնակցութիւնը, անկաշառ է, վստահելի, ապագայի տէր: Նա հերոս է իր ձգտումներով իր սիստէմով: Աղերսանք չի պահանջում նա մեզանից, Է ոչ էլ իր շէմբերը մաշելու փեշակ: Հակառակը: Նա ատում է աղերսանքը, սպասելը: Նրա իդէալը՝ բողոքն է ու կուիլ Է այդ իդէալը միշտ վառ պահելու համար, մենք այլ նիւթ, այլ միջոց չունինք, բայց եթէ բողոքը Է կուիլ . . .

Եւ նրանք, այդ իդէալիստ, անկաշառ բարեկամները, հայասէրների այդ միջազգային լիքը կը դառնայ մեր կուի, հայկական յեղափոխական փութորիկների դիւցազներգուն, սիրտ տուողը, նրա մշտական փաստաբանը Եւրօպայի առաջ, արթուն հսկողը՝ որպէս զի փաստերը, թէ արեան Է յաղթութեան փաստերը չթաղեն, Հանօտ-Լօբանօվեան կաբինէտներում, ինչպէս այդ եղաւ փորձութեան տարիների շրջանում . . .

Եւրօպան՝ Եւրօպայի դէմ:

Եւ դա պիտի լինի հայկական միակ քաղաքականութիւնը, արտասահմանն պրօպագանդի հիմնական նպատակակէտը, որ իր գոյութեան, իր յոյսերի Է իր աղողութեան համար մի աղբիւր միայն ունի — կուի երկրի մէջ, յեղափոխական ցնցումն ժողովրդի ծոցում . . .

Կուող հայը՝ բռնաւոր Թիւրքիայի դէմ:

Ազատասէր Եւրօպան՝ քաղաքական Եւրօպայի դէմ: Այդ են յորդորում են մեզ մեր Եւրօպացի բարեկամները: Այդպէս է թելագրում մեզ կուի լօգիկան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԲԱՅԽՍՏԱԳԻ ՄԷՉ

Ուշ քան երբէք: Եթէ չենք սխալուում, առ աշին անգամն է, որ հայկական հարցը յուզուում է այդ պաշտօնական հաստատութեան մէջ, ուր այսօր ևս դեռ կարծէք սաւառնում է Բիսմարկի ոգին: Գերմանիայի պատգամաւորական ժողովը իր հարիւրաւոր դէմօկրատ ու սօցիալ-դէմօկրատներով տարիների ընթացքում լռելեայն կամ բացարձակօրէն ծափահարում է Վիլհելմ II-ի գերազանցապէս ռեալիստ քաղաքականութիւնը տաճկական Արևելքում: Ռայխստագը հաւատարիմ մնաց իր այդ տրամադրութեանը նոյնիսկ ամենաողբերգական ու շառաչալից թւականներում, երբ «բարեկամ Համիրը» խեղդուում էր արեան մէջ մի ամբողջ քրիստոնեայ ժողովուրդ: Մի ահա յիշե՛ք բարսրութեամբ, որ յատուկ է թերևս միայն գերմանական ցեղին՝ այդ գերագոյն ազգային հաստատութիւնը խուլ ու ժուռ էր մնում հայկական հոգեւարքի դիմաց և անվորով, առանց կարմրելու հանդուրժում էր պրուսական ոստիկանութեան շահատակութիւններին, որոնց նպատակն էր խեղդել Գերմանիայում ամէն մի ազգու պրօպագանդ՝ յօգուտ հայերի, իլլնաս բարեկամ կառավարութեան:

Փետր. 3-ին վերջապէս մի մարդասէր ձայն փորձեց ազդել այդ քարասիրտ մթնոլորտի վրայ: Սօցիալիստ Գրադն Կոնստանտին էր դա, որը բաւական հանգամանօրէն ծանրացաւ Հայաստանի արդի վիճակի վրայ: Ահա նրա ձառի համառօտութիւնը, որ քաղում ենք Vorwärts լրագրից:

«Ինձ մնում է այժմ խօսել մի ուրիշ խնդրի մասին, որը հազիւ թէ երբևիցէ մանրամասն քննութեան աւարկայ է եղած Ռայխստագի մէջ, բայց որի պարզաբանումը այս հիմնարկութեան բարոյական պարտքն է թւում: Խօսքս այն լուրերի մասին է, որ վերջին ժամանակներս կրկին հասան Գերմանիա և որոնք վերաբերում են Ցաճկաստանի հայերի վիճակին: Երբ 1894-ին Եւրօպայի ուշադրութիւնը ուղղւեց Հայաստանի արևմտ անցքերի վրայ, ամբողջ աշխարհը ցասման մէջ էր և Անգլիան, ինչպէս նաև Ռուսաստանը ուղղեցին թիւրք կառավարութեան մի յիշատակագիր, որով պահանջում էին դադարեցնել այնտեղ առաջացող զարհուրելի ջարդերն ու գազանութիւնները: Թիւրքաց կառավարութիւնը ընդունեց այդ յիշատակագիրը, սակայն, դժբախտաբար, նրա խոստումների իրագործման մասին այժմ խօսք անգամ չի կարող լինել: Տարիներից իվեր և վերջին ժամանակներս յարաճուն չափով դարձեալ կատարուում են սարսափելի աւերմունքներ ու կոտորածներ հայերի մէջ: Գրապատճառը թիւրքերի և հայերի ցեղական ու կրօնական տարբերութիւնների մէջ չէ միայն, այլ նաև անտեսակա՛ն ու քաղաքակրթական ասպարիզում: Հայ ազգաբնակիչութիւնը հակուում ունի դէպի եւրօպական հաստատութիւնները և ներկայումս ունի և ներկայումս է, իբրև արթուն, կենդանի առաջադիմող մի ժողովուրդ, որը ձգտում է ազատել Տաճկաստանի չափազանց ապականւած պայմաններից:»

«Հայաստանի մէջ այժմ տիրում է ընդհանուր իրաւազրկութեան մի վիճակ, շարունակաբար տեղի են ունենում անմեղների բանտարկութիւններ: Հրդեհակում են

ամբողջ գիւղեր, չեն խնայում կանանց ու երեխաներին: Այս տեղեկութիւնները անհիմն չեն, նրանք վաւերացում գտան Ֆրանսիական մինիստր Գեղիասէի ձառու անցեալ նոյեմբերի 5-ին:

«Ցաճկաստանի մէջ չկայ ոչ մի հաստատութիւն, որ ընդունակ լինէր բարեփոխումներ անել: Վիճակի առաջնորդներ և ուրիշ հոգեւորականներ իրաւունք չունին կառավարութեանը գանգատներ ներկայացնելու: Իւրաքանչիւր մի գանգատաւոր հայերի կողմից պատժուում է, որպէս պետութեան դաւաճան: Վ. Պօլսի հայ պատրիարքարանը ևս բոլորովին անզօր է հանդիսանում:

«Արդ, ես հարցնում եմ պետական պարոն կանցլէրին՝ տեղեակ է նա այդ իրողութիւններին և արդեօք գերմանական կառավարութիւնը, ինչպէս նաև Բերլինի դաշնագիրը ստորագրող միւս կառավարութիւնները մտադիր չեն որոշ դիրք բռնել այդ խնդրի մէջ: Մասնաւորապէս Գերմանիայի վրայ է ընկնում այդ պարտականութիւնը, որովհետև գերմանական կայսրը քիչ առաջ խօսում էր այն առանձին բարեկամական յարաբերութիւնների մասին, որ մենք ունենք Թիւրքիայի հետ: Նա շեշտում էր, որ գերմանացիք և տաճիկները, թէև տարբեր ծագում ու կրօն ունեցող՝ այնուամենայնիւ կարող են լինել շատ լաւ բարեկամներ: Եթէ այդպէս են մեր յարաբերութիւնները Թիւրքիայի հետ, ապա ուրեմն մեր մասնաւոր պարտականութիւնն է՝ հսկել, որ գործադրին հայերին պաշտպանութիւն խոստացող որոշումները:»

Իւրով ցինիկաբար հեգնեց սօցիալիստ պատգամաւորի առաջադիւր, կտրուկ յայտնելով, որ Գերմանիան չի կարող մղել համաշխարհային քաղաքականութիւն:

Աւելին սպասելի չէր մի կառավարութիւնից, որը ամենավարագ Realpolitik-ի մարմնացումն է այսօր և որը միշտ ցինիկով ու հեգնութեամբ է դիմաւորել ճնշած ազգերի աղիողորմ գանգատներին:

Բիսմարկի հռչակաւոր Ֆրազը Արևելեան խնդրի վերաբերմամբ՝ պահպանում է դեռ իր ամբողջ ուժը:

ՏՕՔԴՕՐ ԻՍԱՔ ՍԻՒՔԻԻԹԻ ՊԵՅԻ ՄԱՀԸ

Ընդհանուր ճշմարտութիւն մը եղած է այն կարծիքը թէ, թիւրքերուն մէջ յեղափոխական և ներկայ ըստիմին դէմ ըմբոստ տարրերը առհասարակ ոչ-թիւրք միւսիւմաններն են եղած՝ ալբանացի, քիւրդ, տաղիստանցի, չէրքէզ, արաբ ևլն: Թիւրք-թաթար ցեղին մէջ մայրերը դեռ աշխարհք չեն բերած օրինակելի և ձեռներեց անհատներ, որ քաջութիւնը ունենային պատերազմի դաշտը նետելու և իտէալական հաւատքէն մղւած, կեանքի դիւցազներգական արհամարանքը ունենային բունաւորին դէմ: Եթէ անոր մէջ դժգոհութեան ահօսներ կամ վաղանցիկ խրտուումներ կը նշմարին, անպատճառ հոն ուրիշ ցեղի մը արիւնը կրող ձեռք մը կայ:

Տքը, Սիւքիւթի պէյ, որուն մահը Սան-Սէմօյի մէջ այնքան ցաւ պատճառեց Թիւրքիոյ ազատասէր կուսակցութեան և զինքը ձանձցողներուն, տիգրանակերտցի քիւրդ մըն էր, որ Պօլսոյ բժշկական վարժարանէն Հոռոտս արքսրելով իբր յեղափոխական խռովարար, բանտէն փախած եկած էր Եւրօպա 1896-ին և երիտասարդ թիւրքերու կուսակցութեան էն ուժով թերևս էն կարևոր սիւներէն մէկն ելած էր:

Հակառակ անքաջալեր պայմաններուն և իր թոքախտաւոր դրութեան, ինքնամոռացութիւնով ու յարատեւութիւնով վարեց «Օսմանյը» թերթին խմբագրութիւնը: Իր մահը, եթէ չենք սխալիր, «Օսմանյը»-ի մահը եղաւ միանգամայն:

Մեր ընթերցողները կը յիշեն՝ երկու տարի առաջ «Դրօշակի» մէջ հրատարակած քիւրդերուն ուղղած կոչերը, որուն հեղինակը, «Քիւրդ բարեկամ մը» կամ «Քիւրդ մը» ստորագրութիւններով, տքր. Սիւքիւթին ինքն էր, որով հրակէր կը կարգար իր ազգակիցներուն, ետ կենալ սուլթան Համիդի շարագործ ծրագիրներուն գործիք ըլլալէ: Ճիշդ է, երկուստարդ թիւրք էր ան, բայց թիւրքիան վերակենդանացնելու պատրանքին մէջ, ամբողջ ցեղի մը մեռելութեան առջև, դժնդակ իրականութեան մտտուքը ունէր. երբեմն մէջը կ'արթննար իր ցեղին ոգին և կուզէր նետուիլ քրդերու մէջ և հայերուն հետ համերաշխ վերջ տալ անազնիւ ու ոճրագործ ըժժիմին, որ կ'ապականէր իր ցեղը և կ'աւերէր երկիրը:

Իր հասարակական ըմբռնումները լայնցած էին եւրօպական աշխարհայեցողութիւնով ազատամիտ, կրօնի թըշնամի—որ թիւրքիոյ կործանման պատճառ կը սեպէր— գործնական յեղափոխութեան կուսակից, բայց համոզուած միանգամայն որ թիւրքերու ձեռքով անհնար էր ատ:

Տօքր. Սիւքիւթի, իր խղճին հետ հաշտ, թիւրքիան ողջնցնելու ապերախտ ասպարէզին մէջ գործեց, առանց մեծ յոյսեր տածելու անոր վերածնութեան մասին, առանց հաւատալու և երբ տարագիր մեռաւ, թիւրքիոյ հորիզոնը դեռ շատ հեռու էր արշալոյսներ ունենալէ...

25^է որ թիւրքիան յուսակաբուութիւններու երկիրն է:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Խ Ա Ր Բ Ե Ր Դ Է Ն

12/25 յունւար 1902

Անցնող տարւան վրայ յետադարձ ակնարկ մը՝ այնքան ցաւազին, որքան ձանձրալի պիտի ըլլար, քանի որ նոյն հարստահարութեանց, նոյն հասարակական գանգատներու և վշտին, ու կառավարական նոյն անողոր ահապարհութեան մանրամասնութիւններն էին, որ պիտի նշանակէինք: Եւ արդէն թիւրքիոյ ու Հայաստանի մեռելական կացութեան մէջ այլազանութիւնը կամ փոփոխութիւնը արիւնի անցքեր, ահաւոր տուամներ ու ժողովուրդներու աղաղակին երբեմն ուժգին, երբեմն հոգեվարք արձագանքները կը կազմեն: Այսօրը այնքան նման էր ասկէ հինգ վեց տարի առաջայ երէկին ու վտահաբար կրնանք ըսել թէ գալիք բոլոր վաղերն ալ այնքան կսկծօրէն նոյնը պիտի ըլլան իրենց բոլոր նախորդներուն: Եւ ի՞նչ դառնութիւն, հոգիի ի՞նչ դժոխային գիտակցութիւն, երբ ժողովուրդ մը, ինչպէս հայը, նոր տարին կը սկսի յուսահատութեան, անմիթար լքումի և ամենէն խելագար բռնապետութեան մը քմահաճոյքին թողածի համակերպութեամբ. հրաճ մը չէ՞ որ վաղը, գարնան դուռը բացածին պէս նորէն երկրագործն իր հողուն պուխը գանար ու այս ցուրտին բուրբն՝ խնուած պանը իր ափ մը խանութին մէջ կ'ծկտած՝ արիւթեամբ մղէ աշխատութեան պայքարը: Եթէ պարբուր բնաղդական ազնիւ բարձանք մը, աշխատութեան յամառ ու տեւական

կորով մը օժտած չ'ըլլար մեզ հաւատացէք որ վայրկեան մ'իսկ անհնար էր ապրիլ այս արիւնշաղախ գետիններուն, այս ընդարձակ ու համատարած գերեզմանոցին մէջ: Հաղորդակցութեան բոլոր միջոցները կտրուած, այնպէս որ ամենավստահելի երաշխաւորութեամբ իսկ էն պատուաւոր վաճառականը արգիլած է մտաւոր գաւառ մը ճամբորդել, արդիւնաբերութեան բոլոր աղբիւրները ցամքած, միայն ժողովուրդը իր մսին ու ոսկորին հետ դատապարտուած է մեքենական կեանք մը քաշչրտել ու աւելին չի պահանջել:

Եւ սակայն այդ միսն ու ոսկորը իրեն թողած ըլլային, սիստեմատիքաբար պատրաստուած այս աղքատութեան, թշուառութեան մէջ, ուր ալ բան մը չի կայ զոհարարութեան, այդ միսն է որ կը պահանջեն: Վերջին պայրամի օրերէն մէկ երկու շաբաթ առաջ խեղճ աղքատներու անկողինները, ուտելիքը, ափ մը պաշարը ծախու հանեց կառավարութիւնը կամ գրաւեց, ամբողջ ընտանիքներ մնացին ձիւնին ու սառոյցին վրայ այս սոսկալի ձմեռան մէջ, ուր դուրսը ագուաին թեւ թռած ատեն կը սառի: Հարկահաւաքութիւնը երբէք այսքան ծայրայեղ հարստահարութեան միջոց մը դարձած չէր. տասնեակ տարիներով բացակայ եղողներուն, անդարձ պանդխտացողներուն — որոնց ողջ ըլլալն իսկ տարակուսական է — բարդած սուրբերը կը գանձէին, գիտէք ուրկէ,—ամենահեռաւոր ազգականներէ, հեռուէ հեռու ծանօթներէ կամ — հաւատացէք թէ սխալ չի կայ — անոնցմէ, որոնք առաջին հարցումի մը այդ բացականչներուն լոկ անուշը գիտցած կ'ըլլան: Եւ այս բոլոր վագերային սկզբունքին գործադրին են քաղաքիս Մալ-միւտիւրին և յետին թահսիլտար Ահմէտ էֆէնտի անունով մէկը, այս վերջին թըրքացած հայ սերունդէ մը կ'իջնէ. ասով յայտնի արդէն իր արիւնին որքան ապականուած ըլլալը, որով իր նախահայրերը դուրս են եկած տառապող, բայց ազնիւ հայերու շարքէն և անցած ապականակիր ընկերութեան մը ծոցը: Քանի՞ քանի՞ անգամ բողբուեցաւ այս 100 զոյ, ամսականով ծառայող բռնաւոր ու վնասակար պաշտօնեային դէմ, բայց գայմագամը իր գինովութեան ժամերէն ազատ միտք ունեցած չ'եղաւ, որպէսզի իր պաշտօնին արդարութիւնը գործադրէր: Ասկէ տասն օր առաջ Ս. Ստեփանոս թաղի ներկայացուցիչները (աղաները) վեց օր բանտարկեցան, գիտէք ինչու, որովհետեւ նոյն թաղէն չէին կրցած գանձել չեմ գիտեր քանի՞ հազար դահեկան զինուորական սուրբ: Բայց աղան ինչո՞վ յանցաւոր է, ի՞նչ բանով պարտական է թաղին սուրբը իր քսակէն վճարելու: Օ՛հ, և այս բանտարկութիւնը լոկ այդ 100 զուրուշնոց թահսիլտարին քմահաճոյքին պատճառով: Նախատիք մըն է ասիկայ, անիրաւութիւն մը, որուն մարդ չի կրնար դիմանալ բայց որո՞ւ պէտք է գանգատիլ, որո՞ւ դիմել: Վ'իմանանք թէ այդ բանտարկուած հայերը — որոնք պատուաւոր և կարող մարդիկ են — դատ բացած են նոյն թահսիլտարին դէմ: Դատին վերջաւորութիւնը հիմակընէ իսկ գուշակելը դժուար չէ: Հայերը պիտի վնասուին և պիտի ստիպուին ասկէ ետք խորին մեծարանքով վերաբերուիլ այդ թահսիլտարին հետ ու յարգել անոր բոլոր քմահաճոյքները:

Եւ հայը ինչո՞վ իր պարտքը իր սուրբը վճարէ, երբ քաղաքական, տնտեսական աներեւակայելի կաշկանդումներէ, հալածանքներէ ետք կը ծանրանայ տակաւին պաշտօնեային, թիւրք խուժանին, մասնակի ու առանձին

բռնակալութիւնը, կամայականութիւնը և ընկերութեան յետին չարագործներուն բոլոր սանձարձակ սխրագործութիւնները: Գողերու յատուկ ընկերութիւններ կազմակերպուած են, վստահաբար օրինաւոր պաշտօնեաներու պաշտպանութեանը տակ, որոնք համարձակութեամբ կը գողնան, կը թալանեն, թէ գիւղերը և թէ քաղաքը, հայ տուններ: Գրեթէ ամէն գիշեր տուն մը կը բացուի և բնակիչներու քնացած միջոցին տանը բոլոր իրեղէնները կը կողոպտուին, արթուն վիճակը աւելի վնասակար է, որովհետև բողբոջ կամ իրարանցման մը պատահականութեան առջև անզէն բնակիչը կամ կըսպանուի և կամ մահու չափ կը վերաւորուի: Ասկէ մէկ երկու ամիս առաջ Խուլու գիւղի խոճաբաշին սոսկալի կերպով վերաւորուած գտնեցաւ գիշեր մը, յայտնի աւազակ Միլլապեղցի պէկի մը ձեռքով, որովհետև խոշաբաշին ու գիւղի կարգ մը ազգեցիկ հայեր այս անցնող տարւան ամառը արգելք եղած էին նոյն պէկին Խուլուի աշարը առնելու: Քանի որ պէկը աւազակի ընչաքաղցուութեամբ վերջին աստիճանի հարստահարած էր քանի մը տարի այդ գիւղն ու գիւղացիները: Խոճաբաշին երբ կառավարութեան դիմեց վերաւոր ու հիւանդ, վճարեցաւ լըբօրէն:

Եւ այս դրութիւնը այնքան տարածուն, այնքան մահացու հանգամանք մ'առած է, որ ազատ խիղճն ու ազնիւ գիտակցութիւնը անկարելի է որ չ'ընդվզին: Պարամէն երկու շաբաթ առաջ 4-5 թիւրք ղինւորական սպաներ ցորեկ ատեն շուկայի մէջ յարձակեցան տէֆթէրտարին վրայ և զայն չարաչար կերպով ծեծեցին, իրենց ապաւիտ ամսականները պահանջելով: Մենք չենք մեղադրեր այդ սպաները, երբ տարւան մէջ մէկ ամսական մ'իսկ առնելու անկարելութիւնը կը տեսնեն: Հարկաւ տէֆթէրտարը յանցաւոր չէ, բայց սպաններն ալ տէֆթէրտարը գանակոծելով վերին, բարձրագոյն իշխանութիւնն է, որ կը խայտառակեն և անոր դէմ է որ կ'ընեն իրենց ցոյցը:

Այս շաբթուան կարևոր և միանգամայն քստմնելի լուրը Տիգրանակերտէն է որ կուգայ: Ար լսենք թէ ցորեկ ատեն կարգ մը սրիկայ թիւրքեր բռնութեամբ կը մտնեն հայ պատուաւորի մը տունը և հոն հաւաքուած հինգ վեց հատ հայ պատուաւոր տիկիներ կը բռնաբարեն ու կը լլկեն: Ասոր վրայ հայերը տագնապալի իրարանցում մը կ'ունենան իրենց բոլոր խանութները գոցելով դէնքի կը դիմեն: Ըուկաները երեք օր փակ կը մնան, կուսակալ—որ ահաւոր տեսակէն կաշառակեր, հարըստահարիչ չարագործ մըն է—իզուր կաշխատի հայերը համոզել ու գրգռուած զգացմունքները հանդարտեցնել, քաղաքը ղինւորական պաշարման տակ կ'առնուի և ալ չենք գիտեր ինչպէս կարելի կ'ըլլայ մտքերը խաղաղեցնել: Ծակաւին ստոյգ մանրամասնութիւններ կը պակսին մեզի եղելութիւնը իր վաւերական ու ամբողջական հանգամանքով ներկայացնելու: Դուք ասկէ իսկ կրնաք չափել թէ յարաբերութիւնները որքան սեղմ են Հայաստանի մէջ քանի որ Խարբերդ Տիգրանակերտէն երեք սրւան հեռաւորութեամբ մը բաժանուած է և հոն տեղի ունեցող դէպք մ'իմանալու համար ստիպուած ենք տասնևհինգ օրով սպասել: Մենք այնքան սովորած ենք այս կարգի վատ չարագործներու, ոճիրներու, որոնք մեզ վայրկեան մը կամ շատ շատ օր մը կը հետաքրքրեն. մտքի շարժած շահագրգռութիւնը իրաւ է թէ կանցնի, սակայն անոր կը յաջորդէ ջախջախիչ տրտմութիւն մը, ահուած յու-

սահատութիւն մը և խուլ զայրոյթի մը քնացած փութոյիկը:

Հայը լոկ յոյսով մը կապրի և այդ յոյսը, ամէն պարագայի տակ կրկնած ենք, քրիստոնէայ Եւրոպային վրայ դուած վստահութիւնն է: Պոլսոյ թերթերը երբ հոս կը հասնին, այս հեռաւոր անկիւններուն, գիւղերուն մէջ քիչ մը կարդալ գիտցող ամէն հայ անյագօրէն քաղաքական-լուրերուն է որ կը յառէ իր ուշադրութիւնն ու աչքերը, անոնց մանաւաճապատ, շատ անգամ հակասական ցանցին մէջ իր համար միտթարական հետեւութիւն մը, միտթարական լոյս մը գտնելու: Դուք կրնաք երևակայել թէ այդ հետեւութիւնը կամ լոյսն ալ որքան մութ ու պղտոր կրնան ըլլալ երբ վերը մայրաքաղաքին մէջ լարուած գրաքննութեան արգոսի աչքերը վաղուց ամէն բան իրենց ապակիին մէջէն անցուցած աւրելու չափ բեկբեկած են:

Ահա այս վիճակին, այս տուայտանքին, այս ահաւելի իրականութեան մէջ է որ հայը կը սկսի նոր տարին. թէ յաջորդող օրերը դեռ ինչ վշտի, արցունքի ու ցաւի անակնկալներ պահած են, այդ թէև այժմէն չենք կրնար ըսել և որուն կը հաւատանք սակայն, բայց ուրախութեան, սիրտման, հաւատքի օրեր, ո՛հ, չենք ուզեր համոզուիլ:

Ն Ա Մ Ա Կ Գ Ա Ղ Ա Տ Ի Ա Յ Է Ն

3 դեկտեմբեր 1901

Տեղւոյս արդի դժուար կացութեան վրայ կուզենք հետեւեալ տեղեկութիւններն հաղորդել ձեզ համառօտիւ: Պ օ ս ն ա ց ի գ ա ղ թ ա կ ա ն ն ե ր.—Վառավարութիւնը չենք գիտեր ինչ գաղտնի նպատակաւ այս վայրենիները ամիսներէ իվեր շարունակ հոս բերել կուտայ հազարներով և ժամանակ մը խաներու, տուներու և մզկիթներու մէջ պահել և քաղաքիս ամէն վիճակին տեղեկացնելէ վերջ կը ղթկէ շրջակայ քրիստոնէաբանակ գիւղերն ու քաղաքները: Տարիէ մը աւելի է որ օրական երեք հարիւր ոսկի գաւառական սնտուկէն դրամ կը բաշխի ատոնց, այս աւթիւ կառավարական սնտուկի դրամական անձկութիւնը աննկարագրելի է. պաշտօնէից ստորագաս մեծամասնութիւնը իրենց յետեւալ ամսականները չընալով ստանալ կը դիմեն ժողովուրդը կեղեքելու: Բաց աստի կառավարութիւնը այս վայրենաբարոյ գաղթականները քաջալերելու համար և ոչ մէկ միջոց կը խնայէ. բնակութեան վարձ չեն վճարեր, խաներուն վարձքը կառավարութիւնը կը վճարէ, մզկիթները վարձք չունին. մնացեալները ժողովուրդեան ամէն դասակարգի պարագայ տուներուն մէջ բռնի զետեղուած են. վարձքին կէսը կը խոստացուի և չի վճարուի: Այս վայրենիներն ալ կարծես մօնղոլեան և թաթար ցեղերու նման ոչ թէ շինելու, այլ միշտ քանդելու, աւերելու ընդունակ են. ուր որ բնակին, հոն այլևս անբնակելի կը դառնայ: Վառավարութիւնը այս անպիտաններուն ձմեռուան վառելանիւթն ալ ամէն օր ձրի տալովը միասին կրկին կերթան քաղաքիս շուրջը հայերու պատկանող այգիներու և պարտէզներու դալար ծառերն ալ կտրելով կը բերեն կը վառեն: Արհեստ չունին. շատ քիչերը տրեխի նման տեսակ մը ոտքիաման շինելով, հաց ծախելով և փայտահատութեամբ կը զբաղեն: Քանի մը ամիս

առաջ՝ մենք դրամ կուզենք որ ուտենք՝ ըսելով՝ կառավարութեան տունը խուժեցին, դէֆթէրտարը ծեծեցին, բայց կրկին կառավարութիւնը իրենց ուզածը կատարեց: Ասոնք ամէն կերպով գոհ թողնելու և ուզածին կատարելու համար՝ ամէն օր իրատէներ կելեն: Աերջերս կրկին իրատէով մը յանձնաժողով մը կազմեցաւ անկախ ունէ միջատութենէ՝ գաղթականաց համար շրջակայ հայաբնակ գաւառներու և գիւղերու մէջ կամ մօտը տուներ շինելու համար, որոնց նախագահն է կայսեր թիկնապահներէն Սատի փաշա: Այս յանձնաժողովն ամէն քաղաք և գիւղաքաղաք մասնաճիւղեր ունի, որոնց պաշտօնն է ամենայն ուշադրութեամբ հսկել գաղթականներու զետեղման և հանգստութեան: Քաղաքիս մէջ 54 տունն բաղկացեալ թաղ մը շինեցաւ և օգոստ. 19-ի գահակալութեան տարեդարձին՝ բացուան կատարեցաւ և բոլոր տուններու բանալիները գաղթականաց յանձնեցաւ: Ասոնց համար հնարած դրոշմաթուղթի հասոյթը իրենց օրապահիկին հազիւ մէկ մասին կը բաւէ: Տուն շինել տալով՝ Յանձնաժողովն իսնէի անւամբ սկսաւ բռնութեամբ դրամ հաւաքել, որն ժողովուրդեան մեծ պատուհաս մ'եղաւ: Ար գիւղն մէջ քանի տուն շինել տալ որ որոշած է, նոյն գիւղի ժողովուրդն ստիպեալ է շինելու, հոգ չէ թէ մարդ գլուխ քանի մը ոսկի բաժին ինյայ, հակառակողն կը բանտարկուի և կը գանակոծուի, մէկ զոյգ եզ ունեցող աղքատ գիւղացիներու իրենց կամերէն բռնի քաշելով հունձը մէջտեղ թողուցին և շինելէք տուններու համար քար, փայտ կրել տւին, ասոնց համար եղած բոլոր դիմումներ, աշխատանք, աղերսագիր, հեռագիր իրերն ելան, օրինակներ շատ են. Տէնէկ, Մատէն, Սթանօղ և ուրիշներ: Սթանօղ քաղաքէս չորս ժամ հեռու հայաբնակ գիւղ մ'է. ստիպեալ է 37 տուն շինել, մէն մի տուն երեք սենեակով, որուն 500 ոսկիէն աւելի դրամ պէտք էր, չմոռնամ նաև քրիստոնեաներէ կը գանձուի, գաղթականաց շատեր երկրագործական. սնտուկէն որչափ դրամ, եզ և գործիք որ առած են, բոլորն ալ ծախած ու կերած են:

Տ ու ը ք ի գ ա ն ձ ու մ.—Պետութեան պիւտճէին անլուր նեղութեան. պատճառաւ, կառավարութիւնը իր բոլոր ուշադրութիւնը տւած է սուրբ գանձելու, որով կարեւր ըլլայ պետական սնտուկին ահագին կարօտութեան մէկ մասն լեցնել. հարկահաւաքիչները թէ քաղաքը և թէ շրջակայները յարձակելով աղքատ ժողովուրդի վրայ, ինչ որ գտնեն կառնեն, դրամ, կով, ոչխար, ցորեն և կահ կարասիք և աճուրդի հանելով ինչ գին որ գտնէ կը ծախէ, հոգ չէ թէ անդին խեղճ աղքատը անօթի կը մնայ: Ջարմանալին այն է որ գանձուած դրամներու փոխարէն ընկալագիր ալ չի տրուիր, անշուշտ ապագային կրկին պահանջելու դիտարութեամբ: Սունկուրլու, որ գայմագամնիստ քաղաք մըն է, սուրբի գանձման համար աղքատ կնկան մը ուրիշ մէկ բան չգտնելուն՝ տան մէկ մասի գերանները քակեցին և ծախելով սուրբին հաշեցին: Հոս քանի մը ամիս առաջ նոր կալածով համար եղաւ և ըստ օրինի իւրաքանչիւր մարդու ինչ սուրբ որ որոշած է իրեն հաղորդեցաւ, բայց հիմա երբեմն մարդոցմէ իրենց ծանուցածին կրկին կամ եռապատիկը կը պահանջեն, առարկելով թէ առաջուց քիչ գրւած է. վայ անոր որ հակառակելով կը բողբէ, յանձնաժողովը բողբած օրն իսկ ուլածին կրկին

կը պահանջէ և կը ստիպէ վճարելու. ասոնց օրինակներն խիստ շատ են:

Երկու ամիս առաջ կայսեր մէկ իրատէն ելաւ, իրր թէ այլևս մահապահան և ոչ-մահապահան բոլոր հպատակներն անխտիր պիտի նկատուին և պիտի վայելեն խաղաղութիւն, պաշտպանութիւն, երջանկութիւն հաւաւար, սակայն դեռ ամէն ինչ դեռ իր առջի վիճակովը կը շարունակուի և օրէօր ալ վատթարանալով է: Հայու մը Պօլիս երթալու համար անցագիր առնելն գրեթէ անկարելի է. շատերը կ'ըսեն թէ մինակ վաճառականներու ներելի է. իսկ վաճառականաց կ'առարկեն թէ քանի մը հարիւր ոսկինոց պարանք առնելով վաճառական չ'ըլլար, քանի մը հազար ոսկինոց առնելու է լին: Հայ վաճառական մը կար, որ ստիպեալ էր Պօլիս երթալու, շատ աշխատեցաւ. ոստիկանապետը կաշառ առնելով խոստացաւ անցագիր տալ և արտօնեց, բայց մարդահամարի տեսչութեան պաշտօնեան արգելք եղաւ առանց բանաւոր պատճառ մը ցոյց տալու, անշուշտ ինքն ալ կաշառած չ'ըլլալուն համար. մարդը ստիպեալ քանի մը ոսկի ծախսով հեռագրեց ոստիկանութեան նախարարին և հազիւ ամիս ու կէս վերջ պատասխան առնելով կ'ըրցաւ երթալ:

Ամիս մը խկեր Սիվրիհիսարի մէջ պատահած ձերբակալութիւնը ուշագրաւ են:

Ժամանակին մագործ և յետոյ չալընի, վերջ կեղծբժիշկ Պօղոս անուն վատ անցեալ ունեցող անձ մը ուրիշ հայութեանէ Դըքութեան դարձող Պօղոսի մը հետ միասնալով, գայմազ մին և դատին թելագրութեամբ մասնութիւն կը կա արեն: Յիշեալ Պօղոս շատ անգամներ թէ Պօլիս գտնուող Սիվրիհիսարցիներու և թէ բուն իսկ Սիվրիհիսարի մէջ ծանօթ հարուստներու կը դիմէ դրասական օգնութիւն ուզելու, սակայն յիշեալներն զինքն լաւ ձանձնալնուն կը մերժեն. ասոր վրայ Պօղոս գայմագամի անուշ շողորթութիւններէ խաբելով անոր հետ միասին Պօլիս կերթայ և հոն ուղղակի ոստիկանութեան նախարարին կուտայ իր մասնութեան գիրը: Անմիջապէս Աֆիօն Գարահիսարէն սիվրիհիսարցի տօքթօս Արապեան ընդ հսկողութեամբ Պօլիս կը բերուի. Պօլիս բնակող ուրիշ սիվրիհիսարցի մը՝ գօթիսիօնձի Պետրոս կը բանտարկուի. մէկ օրուան մէջ Սիվրիհիսար ^{20/30} տուն կը խուղարկեն և քաղաքին պատուաւոր հարուստներէն տասը հոգի բանտը կը նետեն. ցուրտին, երկու օր առանց հացի չոր տախտակների վրայ սպասեցնելէ յետոյ՝ կըսկսին հարցաքննել: Ասոնց վրայ ծանրացած ամբաստանութիւններն խիստ ծիծաղելի են. մինակ մէկը յիշենք. Գէորդ 2էթինեան, որ բանտարկուողներէն մէկն է, ամբաստանուած է, թէ Պօլիս գտնուած ժամանակ կայսեր վրայ զէնք պարպած է և յետոյ անյայտ եղած: Աւրիշներուն ալ ասոնց նման բաներ են: Այժմ բանտը գտնուողներն են՝ Վարապետ Հէլվաճեան, Գէորդ 2էթինեան, Վարապետ Պալեան, Լևոն Ներսէսեան, Վարդանեան և Յակոբ էֆ. անուն մահքէմէի անդամ մը: Ջրպարտութեամբ պառկած ըլլալուն համար մինչև հիմա Սիվրիհիսարէն կայսեր, եպարքոսին, պատրիարքարանի 50 լիրայէն աւելի ծախսով հեռագիր տւած են, բայց ցարդ պատասխան մը չէ առնած: Գայմագամն ի վարձատրութիւն 4-րդ մէճիտիէի նշան ստացաւ, իսկ մասնիչ Պողոսներն Վ. Պօլիս ընդ հսկողութեամբ կը սպասեն կոր:

Շրջակայներն սպարանք տանելով վաճառելն գրեթէ

անկարելի դարձած է. գողութիւն, սպանութիւն անպակաս են միշտ: Օխձանը Մխտոյ և ընկեր աւազակներ չորս կողմն ա՛հ ու սարսափ ձգած են. կառավարութեան քթին տակ կը կողոպտեն և կը չարչարեն ժողովուրդը, բայց որո՞ւ հոգ. թերևս այդ աւազակները կառավարութեան պաշտօնէից մէջ իրենց ընկերներն ունին, որոնք կողոպուտին կէսն անոնց կը բերեն, ապագային զիրենք պաշտպանելու համար:

Ն Ա Մ Ա Կ Տ Ի Վ Ի Կ Ե Ն

21 յունւար 1902

Անցեալ նամակովս արդէն գրեցի պաշտօնական թաւանի մասին: «Բարեկենսամբ», աւարէն յետոյ, մասնաւոր իրատեղով տուրքերու յետաձգում հրամայած էր (բարով ու խերով չի հրամայեր). անկից ի վեր երկու-երեք տարւայ պէտէնները, կարծես յատուկ նպատակով կուտած, մէկ անգամէն գանձել կուզեն այժմ, ասոր համար գործածելով ամէն անխոստովանելի միջոցներ: Ամսէ մը ի վեր թահսիրտար անւանեալ գաղանները, մասնաւորապէս հայ գիւղերը ցրած, տուրք գանձելու անւան տակ, չարիք չմնաց որ չի գործէին վրանին եփած ջուր լեցնել պաղ ջուր լեցնել, երեսնին թրիք բսել, թըրիք խմցնել մահամերձ ծեծել, սովորական բաներ դարձան. անպատկառօրէն գինովնալով անպատիւ առաջարկութիւններ, հայհոյութիւններ ընել սովորական խօսակցութեան տեղ բռնած ըլլալով զանց կ'ընեմ գրել: Այսպէսով թալլեցին ամէն ինչ՝ ուտելիք, անկողին, հագուստ. այժմ գրեթէ բոլոր ժողովուրդը ամենածայրայեղ թշուառութեան մէջ կը գտնուի. եթէ այսպէս շարունակուի, գաւառիս հայ ազգաբնակչութիւնը շուտով կը սպառուի, զի թշուառութեան հետեւանք տարափոխիկ հիւանդութիւնները սկսած են մուտ գտնել: Կառավարութիւնը հարիւրին հինգ զեղը մը հրամայած էր ներկայ տարւոյս տուրքերը ամբողջապէս վճարողին, և իբր մեծ շնորհ մը մասնաւորապէս ծանուցած: Սակայն այդ միջոց մը եղաւ որ ինքը յաշտ օտարաց մեծարւի և օգտուեցան միայն տաճիկ կապալաւունները, զի հայոց, ինչպէս վերը ըսի, յետեւալ տուրքեր գոյութիւն ունենալուն՝ գանձուածը հին հաշտոյն կ'արձանագրուի. այսպէսով թէև մեզի շնորհուեցաւ, բայց տաճիկները օգտուեցան:

Կառավարութիւնը կամայականութեանց կեդրոն մը դարձած է. թիւրքերն ալ մեծապէս դժգոհ են այս ընթացքէն և իրենք ալ նեղն են, բայց կը վախնան խօսելէ. տուրքերու հաւաքումը օրըստօրէ կը սաստկացնեն, եթէ այսպէս տարի մը տեւէ, ինքնին լուծուած պիտի ըլլայ մեր խնդիրը, մենք լուծուած ըլլալով:

Սահմանադրութուն վրայ զանազան դէպքերու լուրեր կը շրջին հոս. նաև մաս մը հայեր Սուրբ Կարապետի վանքն (Մուշ) ապաստանած և հոն պաշարած են կ'ըսուի. հոս զանազան տարաձայնութիւններ շատ կան:

Մեծ կոտորած են արել աւերել են 4 քրդական գիւղ, սրի անցկացնելով բոլոր բնակիչներին՝ մեծ ու փոքր, ժող 25 կին և աղջիկ էլ ամենաընտիրներից, գերի են վերցրել մանրամասնութիւնները պակասում են:

Բ ա յ ա զ է դ ու մ օրէցօր խստութիւնները աւելանում են. տեղւոյն կառավարիչ միւթէսարիֆը յայտնի Ձէքի փաշայի եղբայրն է, որը ընթանում է իր եղբօր ուղղութեամբ: Միւթէսարիֆը լարած է պարսիկ հիւպատոսի դէմ, այնպէս որ այս վերջինը ստիպւած է իր մարդիկներով ու զէնքով պաշտպանել: Միւթէսարիֆը հրապարակի վրայ ծեծել է տել հիւպատոսի գրագիրն ու ծառաները. մտադիր են եղել մինչև անգամ ծեծել հիւպատոսին, բայց միջամտել են ու չեն թող տելը: Ամէն մի պարսկահայատակի չարչարում են և մի քանիսն բանտարկել են: Անցեալ շաբաթ մի հայ տղայ դիմել էր պարսկական հիւպատոսին անցագիր խնդրելու՝ Պարսկաստան գնալու համար. կառավարութիւնը հետեւում է տղային, գտնում ու բանտն է գցում:

Համիդիէների ոռճիկները դադարեցնելու ու նրանց զէնքերը հաւաքելու մասին եղած լուրերը շատանում են. տեղ տեղ զէնքերնին արդէն առել են թէ ի՞նչ գաղտնիք է դա, դեռ ևս չի պարզուած:

Տաճիկ կառավարութիւնը չի դադարում իր խորամանկ ուժեղ առաջ տանելուց: Նա շարունակ լարում է յիմար ու միամիտ քրդերը՝ աղան, պէն ու ցեղապետները իրար դէմ, կուեցնում է ու վերջը ստիպում է նրանց դիմելու (իրենց, տաճիկների ասածի նման) լ ա ս տ ի կ ի (առաջգական) դատարանին, այնպէս որ նրանց խնդիրը ցանկացածին չափ երկարում ու ձգում է. քիւրդ աղան ու պէյը ստիպւում են ամիսներով քարշ գալ հիւթ մ է թ ի դ ո ն երը, եղտոելով սուլթանական պաշտօնեաների տրեխ բերանները:

Աշնան սկզբում էր, երբ Յապաղում պատահած քրդական կուրից յետոյ, քրդերը Վան գնացին դատի, մինչև օրս էլ, այս մի քանի ամսւայ ընթացքում, ոչ մի հայց ու փորձ չի եղել ու նրանք, երկու դատախաչները, տրորւում են դուրից դուռ փողեր վառնելով: Դրանցից մի քիւրդ պէյ խելօք է գտնել ասելու որ «դուշմանը այս դուռը չգիտի և ոչ մի հիւանդ» տաճիկ դեղով չբժշկուի՝ և դրանց նման հազարաւորներ: Ոչ մի ժամանակ չի լինում, որ թիւրք դատարանից պակաս լինի քիւրդը—նրա վէճն ու դատը: Տաճիկ պաշտօնեաները սիրում են զբաղւած լինել զալմաղալով—միմիայն այնպիսի զալմաղալներով, որ իրենց փորի ցաւը կը հոգայ:

Վանում առել են մի քանի քիւրդ պէյերից նոր սիստէմի հրացաններ, նրանց (համիդիէների) այնքան դիմուռներին, տաճիկ կառավարութիւնը առարկում է թէ «մեր կոտորածների ժամանակ հայերից էլ այդպիսի զէնքեր կնք առել, նրանց մասին եղած հարց ու փորձի ժամանակ, ձեր խնդրոյն էլ կը նայենք»։ յիմար քիւրդերը սպասելով սպասում են դեռ, թէ իրենց հրացանները պիտի վերագործեն:

Տաճիկները շարունակում են իրենց ինտրիգները պարսիկների դէմ: Բայագէզի կառավարիչը շարունակ գրգռում է քիւրդ ցեղերին, որ գնան ու պարսկական սահմաններից աւար բերեն: Փաշան ասել է, որ թող պիտի տայ տաճիկ զինուորներին առաջ գնալ պարսկաց սահմանում, մի քանի ժամ հեռաւորութեան վրայ, պէտք եղած աւերուներ գործելու: Այս բոլորը առաջ է

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Ր Մ Ա Վ Ո - Տ Ա Ճ Կ Ա Վ Ա Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ա Պ Ա Լ Խ Ի Յ

25 յունւար 1902

Սալմաստում լուր է պտտում, որ Մարշիմօնի հպատակ ասորիները յարձակում են գործել քրդերի վրայ և

գալիս միւթէսարի՞ն է պարսկասահմանագլխում պարող պարսիկ Փ ա շ ա խ ա ն ի միջև բորբոքած ատերութիւնից, հէնց դրա համար էլ միւթէսարի՞նը շարունակ աշխատում է վէճի ու խռովութիւնների տեղի տալ ու պաշտօնապէս տաճկական զօրքերը այդտեղ ուղարկել իրենց բարբարոսական քաջութիւնը ի գործ դնելու համար:

Պարսիկ կառավարութիւնը բնաւ չի մտածում թէ միւթէսարի՞նը ի՞նչեր է սարքում իր գլխին: Խեղճ պարսկասահմանաբնակ բաեաներին վիճակած է տանջել իրենց սև ճակատագրից օրէցօր վտանգը սաստկանում է:

Ձէքի փաշայի եղբայրը ինքնագլուխ գործելու և միջից դուրս գալու քաջութիւնն ունի:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ի Կ Ն Ե Բ

ՏԱՄՆՈՒԹՅՈՐՈՐԻ ՆԱՄՆԱ

Պետերբուրգ, 11 մարտ 1902

Երեւանցեալ Խրիմեան Թիֆլիս է դարձեալ: Ի՞նչը քշեց ծերունի գահակալին դէպի թագաւորանիստ քաղաքը: Արդեօք Արարատեան կիսաբանդ աթոռի իրաւագործի, երկչոտութեան մէջ թաղած վիճակը, թէ ա՛յն, որ «Վասպուրկանի արծիւը» իր մէջ այլևս ոչինչ տենչանք, ոչինչ իղձեր չի զգում, բայց եթէ տենչանք աննպատակ ճանապարհորդութիւնների, աննկատելի թէ հային և թէ «չինովիկին», անհետաքրքիր թէ պրիստաւին թէ նահանգապետին:

Անցած ժամանակներ: Կար ժամանակ, որ «ամենայն հայոց կաթողիկոսը» երբ ոտքը էջմիածնից դուրս դնէր՝ ամբողջ կովկասը կը դղրդար. տակն ու վրայ կը լինէր ամբողջ գիծը՝ Ձանգիից մինչև Կուրի ափը. ոտքի կը կանգնէին աստեղազարդ գեներալներ և երևելի ու աներևոյթ լրտեսները կայսերական գահի. իրարանցում, շշուկ, յարգանք, հարցական նշաններ: Իսկ այժմ... Այժմ նա գնում է և գալիս, ոչ որ չի տեսնում նրան, ոչ որ նրան չի հարցնում. «Ի՞նչ կայ, Հայրիկ, ինչո՞ւ եկար և ո՞ւր կերթաս»...

Սակայն այս անգամ — սուտ է վերջին լուրը՝ առևանծ կովկասից — նա ճամբայ է ելել՝ գործով, ցաւով, կառավարչապետին դիմումն անելու յոյսով, գաղթականների գործին դարման տանելու երազով. այս երազով որովհետև դիմումների արդիւնքը երազ է մնում, աջողութիւնը երազական:

Եւ միշտ նոյն պատմութիւնը: Հետը մի եպիսկոպոս, յետևից մի քանի վարդապետներ, շքանշանը կրծքին, գաւազանը դողդողուն ձեռքին և իբրև անժխտելի իրաւունք՝ երկու շաթիր կառքի վրայ, նա այց կերթայ փոխարքայական պալատը: «Նորին պաթառափայլութիւնը ընդառաջ ելաւ՝ նորին վեհափառութեան մինչև սանդուխտների գլուխը և բարեհաճեց համբուրել՝ նորին օծութեան աջը»: Յետոյ՝ «երկարատև խօսակցութիւն», փոխարքաձ ստախօսութիւն, որ «սիրալիր տեսակցութիւն» անունն է կրում ցենզօրական մամուլի էջերում, ապա մի քանի օր շարունակ շշուկներ փողոցում, նախ՝ «կարևոր բաներ են խօսացել», յետոյ՝ «սուտ են խոստացել է՞ և ի վերջոյ՝ «է՛հ, բան չունէք»... Աւ դարձեալ լուրութիւն ու հանգիստ՝ ճահճի երեսին...

Հանգիստ է, այո, պալատական ճահճի: Իսկ հայ գաղթականը: Նա էլ հանգիստ է: Զգացարգեօք, թէ էջմիածնից մէկը մեկնեց՝ տարած նրա ցաւերով, որ այդ ցաւերի մասին խօսք եղաւ, գեղեցիկ, պճնազարդ պալատում, թէ այդ անցողական լուրը անցողաբար անգամ չէ թափանցել այն գոմերը, ուր պպաստան է գտել թիւրքահայ փախստականը:

Փախստական: Փախաւ, այո, նա իր այրած, խորոված վաթանից: Արեան օրերին էր այդ: «Փախիր, ով կարող է», հնչեց երկրի մի ծայրից միւսը: Եւ փախան հայրենիքից, վաթանից, ծեր ու ջահէլ կին ու աղջիկ:

— Հրէն է՞, սահմանը, գոչեց ջլոտ, կիսամերկ ալաշկիրտցին, ձեռքը արևելք մեկնելով: Եւ սահմանագլխի բլրին կանգնած, կուրծքը լի վաթանի վըշտերով, նա վերջին անգամ յետ նայեց: Խօսք չէր դուրս գալիս բերանից. ձայնը որկորում չորացաւ: «Մնաք բարով սարեր-ձորեր, և դուք կանաչ դաշտեր, աղբրակներ. ինձի չմոռնաք. ես ձեզ չեմ մոռնալու»:

Եւ չմոռացաւ: Երկար տարիներ սպասեց, միշտ աչքը տնկած վաթանին: Աւ ամէն գիշեր, անկողին մտնելիս, նա միշտ այն էր մրմնջում. «մնաք բարով սարեր-ձորեր, ինձի չմոռնաք, ես ձեզ չեմ մոռնալու»:

Երկար սպասեց: Այն օրից, երբ Սասունի ժառերը կարմիր արտասուք թափեցին, ութը տարի անցաւ: Ինչ տարիներ: Ցան տեղ՝ գոմեր, հացի տեղ՝ գարի, աշխատանքի փոխարէն՝ նահատակութիւն, բարեգործական դիմակի տակ՝ նախատիք: Նրա անուշով փող հաւաքեցին, նրան չհասցրին. նրա քրտինքով արտ ցանեցին, հունձը նրանից խլեցին: Բարի գիւղացու մօտ ապաստան գտաւ, եղբայրը դարձաւ. ոստիկան եկաւ «արգիլած է՞» ասաց ու քշեց: Քաղաքում պարպմունք որոնեց, ոտքը քիչ ամրացրեց. դարձեալ ոստիկան. գլուխը քարին խփեց, կոնսուլի դուռը մաշեց, երեսաներից կարեց՝ անցագրի տւեց, դարձեալ ոստիկանը եկաւ, հացի հետ թուղթն էլ խլեց:

Աւ այսօր 50 հազար մարդ, երկու կրակի մէջ, երկու քարի արանքում, ոչ գնալ կարող են ոչ մնալ, առանց հողի, առանց ապաստանի. լեզու չունեն որ բողբոջեն, ուժ չունեն, որ կուեն: Ո՞ր ջուրն ընկնեն...

Ո՞ր ջուրն ընկնեն, երևի այդ էր իմաստը հայոց կաթողիկոսի քաղաքավար, մեղմ, աղբրսալից խօսքերի, ուղղած իշխան Գօլցիցիին, պալատի սենեակներում: Եւ իշխանը պատասխանեց. «բարձրագոյն հրամանն է»: Եւ հիմնւած այդ ամենափրկիչ հրամանի վրայ 1901 նոյեմբերին այդ «չար հրեշտակը» արձակեց հետևեալ պ ա շ ա խ ա ն շ ը Վ ա բ ր ա կ ա ն ը, ուղղած կովկասեան նահանգապետներին.

«Ի կատարումն Բարձրագոյն հրամանների, որոնք սրւած էին 1901 թւի փետրարի 1-ին և յուլիսի 29-ին՝ այն թիւրքահպատակ հայ փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի մասին, որոնք զանազան ժամանակ, սկսած 1893 թւից, զաղթել են մեր սահմանները, առաջարկում եմ ձեր վերադառնողութեան յայտնել ձեզ յանձնած նահանգի սահմաններում դսուող հայ փախստականներին հետևելովը:

1) Ձանազան ժամանակներում, սկսած 1893 թւից, կովկասեան երկրի սահմանները իրենց կամքով եկած թիւրքահպատակ հայերին, որոնք դանդաղում են կամաւորապէս, իրենց հաշուով, հետանալ կայսրութիւնից, համապատասխան աջակցութիւն ցոյց կը տրուի այդ քանի համար:

2) Մնացած այն բոլոր հայ-փախստականներին, որոնք չեն ցանկանայ գաղթել արտասահման, թող է արևմտ մնալ իրենց այժմեան բնակած տեղում եւ գրեւ զիւրահան համայնքների վրայ, եթէ այդ բանին կը համաձայնեն վերջինները (141—146 յօդ. 9 հատ. առանձին յաւելածի): հակառակ դէպքում, 1899 թւի նրատարակութեան 9-րդ հատորի 564-րդ յօդուածի 9-րդ պարակի դրուածում, նրանց թող է արևմտ գտնել մէջնանների (քաղաքային) հասարակութիւնների վրայ: Միեւնոյն ժամանակ վերոյիշեալ անձերից նրանք, որոնք կը ցանկանան բնակուիլ հաստատել ներքին նահանգներում, թող է արևմտ, Ռուսաստանի հպատակութիւն ընդունելուց յետոյ, ճանապարհ ընկնել իրենց հաշուով կրկաթուղիների էթանայրած սակազնով, իրենց ընտրած տեղերը, կովկասեան երկրից դուրս, եւ այդպիսի անձանց առանց արգելքի կը տրուին պատշաճաւոր անցագրեր:

3) Թէ կովկասեան երկրի սահմաններում մնացող եւ թէ ներքին նահանգները գտնելուց ցանկացող հայ-փախստականները պարտաւոր են ռուսաց հպատակութիւն ընդունել: իսկ ռուսաց հպատակութիւն ընդունել չցանկացողները պարտաւոր են անյապազ հեռանալ ռուսաց կայսրութեան սահմաններից: Միեւնոյն ժամանակ հայ-փախստականներին իրաւունք է արևմտ այժմ եւ եթ Ռուսաստանի հպատակութեան մէջ մտնել, իրիւր բացառութիւն 1899 թւին նրատ. 837 եւ 389 յօդուածներով:

4) Հայ-փախստականները 190 թւից սկսած են թակայ են զինուորացուածութեան կայսրութեան մնացած ազգաբնակչութեան նման:

5) Գիւղացիների հողային բարեկարգութեան ժամանակ կովկասում, ք. կէտում յիշած անձանց, եթէ նրանք կը վերաբնակուին արդէն եղած գիւղերում, որոնք դեռ բարեկարգութիւն չունեն, իրաւունք չէ արևմտ հողաբաժին ստանալ:

6) Բաղաձններից դուրս անչարտ դոյքեր, ձեռք բերելու իրաւունքը կովկասում թող է տրուում գողութեան հայերին կամ նրանց սերունդներին ոչ վաղ, քան ռուսաց հպատակութիւն ընդունելուց քսան տարի անցնելուց յետոյ. եւ

7) Վերեւ բերած կանոնները տարածուում են այն փախստական հայերի վրայ, որոնք եկել են կովկասի սահմանները մինչեւ 1901 թւի փետրուարի 1-ը. իսկ վերոյիշեալ ժամանակամիջոցից յետոյ եկածները դուրս են ուղարկելու կայսրութիւնից:

Վերոյիշեալին կցում եմ, որ Բարձրագոյն նրամանքի կատար անկող կարգի մասին, հայ-փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի վերաբերմամբ, ես առանձին ցուցմունքներ կը տամ ի ղեկավարութիւն:

Սննատոր-գններաւ-աղիւտանաւ իշխան Գուրգեն

«Ցուցմունքներ կը տամ»...

Դրա մէջն է կարեւորը, վճռականը, իսկական օրէնքը... Շրջաբերականի միւս մասերը օրէնքի յիշատակութիւնն է լոկ, այնքան դատարկահնչուն իշխան Գուրգենների համար, որոնք յիշում են օրէնքը, երբ հարկաւոր է աղմուխստրատիւ կարգադրութեան իսկական իմաստը ծածկել, քողարկել, երբ հարկաւոր է մթնացնել ժողովրդի առանց այն էլ մութ աչքերը:

Գաղանի հրահանգներ, իհարկէ, տրւած են արդէն: Ախտոս որ նրանք մինչև այժմ էլ զիւրահան գարաններից դուրս սովորական մահկանացուներին յայտնի չեն: Յայտնի են միայն մի քանի կէտեր մի ուրիշ գաղտնի շրջաբերականից, տրւած ներքին գործերի միտնարի կողմից իր ստորագրեալներին: Ահա մի էլ նրանից.

«Ձեր ուղարկութիւնն եմ նրա իրում Անդրկովկասի մէջ ապաստանած հայ գաղթականների անկանոն վիճակի վրայ: Տեղեկագրերը հաստատում են, որ գաղթականների թիւը փոխանակ պակասելու, երթալով

անկող. վրայ է: Այս վայրկեանիս 40,000-ը անցնում է, եւ մեծ մասը ապրուստի միջոցներից բաղադրվին զրկւած. առեւտուրի դժարութիւնը, ինչպէս նաեւ նրանց հագալու անհրաժեշտ հարկը ոչ միայն ծանր լսու է դարձել կառավարութեան համար, այլեւ անհանդրստութեան պատճառ ժողովրդին:

«Ուստի տեղեկացնում եմ ձեզ, թէ բարձրագոյն որոշման համաձայն, պէտք է ձեռք առնէք բոլոր հարկաւոր միջոցները 1902 մարտ 1-ին ռուս հյատարակութեան ստիպելու. բոլոր հայ գաղթականներին Հարկաւոր է ուրեմն պատրաստել ցուցակները այն անձերի, որոնք նաեւ անկանաբար պիտի աղբւեն այս օրէնքից, եւ որոնք նրանց արամագրութիւնը ապագայ զինուորական ծառայութեան համար Հարկաւոր է պատրաստել նաեւ հողային արձանագրութիւններ, որպէս զի կարողանանք որոշել այն տեղերը, ուր ռուս հպատակութիւն ընդունող հայերը պիտի կարողանան օգտակար կերպով նստասուել: Այս նպատակի համար պիտի քննեն այն հողերը, որ դուխորները դործ էին անում նախապէս Պէտք է ուրեմն կարելի եղածին չափ շուտով ուղարկէք ձեր պատշաճ տեղեկագրերը ձեր պիտոսին»:

Ինչ է իմաստը այս բոլոր շրջաբերականների, գաղտնի ու ոչ գաղտնի հրահանգների: Ահ, անշուշտ, եթէ կայսերական կառավարութիւնը կարող լինէր, մոգական գաւազանով յետ դարձնել 50 հազար հայ գաղթականները, դա կը լինէր մի «նպատակայրմար» լուծում այս անիծւած հարցի: Սակայն այդ մոգական գաւազանը գոյութիւն չունի. հարկաւոր են ուրեմն այլ գաւազաններ:

Վերագարձնել հայ գաղթականներին դէպի երկիր, դէպի հայրենիք, ռուսաց կառավարութիւնը չէ ուզում: Դա նրա քաղաքական հետադարձութիւնն է: Ամբողջ 8 տարի է, նա այդ ծրագրին է դիմում: Եւ ինչո՞ւ վերագարձնել, քանի որ այնքան տարիներից իվեր նրա տնէջանքն է ստեղծել Հայաստան առանց հայերի, մի Հայաստան, որտեղ հայ տարրը չլինէր խիտ, գերակշռող թւով աւելի զօրեղ, անտեսապէս ամուր: Եւ այն դիւական տեսակէտի արդիւնքն էր, որ նա թող տուց հայ փախստականների ահաբեկ խմբերին անարգել խուժել կովկասի սահմանները: Եւ ո՞վ է այն միամիտը, որ հաւատայ, թէ ցարի կառավարութիւնը անկարող էր, եթէ անկեղծօրէն ուզենար ստիպել օսմանեան իշխանութեանը՝ զիջանել եւ յետ ընդունել գաղթականներին, նոյնիսկ վերագարձնել նրանց գոյքը, հողը, տները: Այդ նա չկամեցաւ, եւ դրա փոխարէն՝ սիրով ընդունեց սուլթանի ծրագրը՝ 50 հազար հայերին տեղափոխել Արեւել, հեռու կովկասից, հեռու Հայաստանից, հեռու հայկական բնակավայրից, այն շրջանից, որտեղ հայը վտանգաւոր է քաղաքականապէս, «անհանգիստ» սոցալին ձգտումներով: Սակայն այդ չարամիտ «ծրագրերը» ջուրն ընկաւ Խոնարհ գաղթականը քայլ անգամ չուզեց անել:

Շատ էլ զարմանալի չպիտի թւի այդ «պօղտիկը», որովհետեւ կայ դրանից աւելի անհաւատալի, աւելի համարձակ ծրագիր: Դա կառավարչապետ Գուրգենի վերջին գաղտնի գեկուցումն է, որ նա անցեալ տարի Պետերբուրգ գնալով ներկայացրեց միտնարների խորհրդին, իբրև փրկութեան մի նոր միջոց: Երես առաւ Պետերբուրգի իր զօրեղ պաշտպանների ժպիտներից, հազած աստեղազարդ համազգեստը, կրկնապատկած իր դէմքի յաղթական գծերը, նա ներկայացաւ միտնարական ժողովին: Ժպիտներ քաղեց նա եւ դեռ չսկսած պաշտօնական բացատրութիւնները, աւետեց, որ գտել է վերջապէս վտանգաւոր հայ տարրից կովկասը փրկելու միակ միջոցը:

Ինչ նա անդամացրեց այսպէս.

«... Ազգիսը առւաջնելու և հայկական վասն-
դատը անպարտօղիզը մէկ անգամ ընդմիջ աքա-
տակիլ անելու միջոցը այս է— չկայ այլ միջոց— գաղ-
թեցնել հայրենի միջիլ, ազատել այդպիսով Ենդրը
կողմաբ հայկական խառնվարդները՝ ներկայութիւնից
և նրանց տեղ հաստատել ներքին նահանգներից
բերած ուղղակիա գաղթականներին»:

Յիրեց լուսեթիւն: Ամենաուղղակիա շրթունքների
վայ անգամ ստուեց ծախար: Ինչ մինչև իսկ գինւորական
միջնաորը, Վարդապետին, որ երբեմն իբր կառավարիչ
Անդրկասպեան իրկրի, բաւական լաւ Խանաչում է
«հայկական անպարտօղիզի» չափը, հարցրեց.

— Ի՞նչ էք կարծում, ձերդ պայծառապայտութիւն,
որքան կը լինի հայ խառնվարդների թիւը մի այսպիսի
հայրենակ կենտրոնում, ինչպէս Զուլին է կամ Երևանը:

- ?
- Բոտաւորապէս 50 կը լինի:
- Այո, համարեա այդքան:
- Ինչ ընդունում եմ նոյնիսկ, աւելացրեց միևիսարը,
կրկնապատիկը՝ 100: Ինչ կարծում եմ, որ ամենալաւ
միջոցը՝ «հայկական շարժումը» արժատախիլ անելու, է՝
կարանաւորել այդ 100 խառնվարդները, դուրս բերել
նրանց իրկրից, և աքսորել միջիլ: Գրանով դուք կա-
տարելապէս ազատած կը լինէք երկիրը վասնզից, առանց
աքսորելու մի ամբողջ ժողովուրդ դեպի միջիլ:

— Իհարկէ, իհարկէ, կրկնեցին միւս միևիսարները:
«... Զուլին ընկաւ բորը հայրը գաղթեցնելու քաղա-
քական ծրագիրը, որի վայ նրա հեղինակը թափել էր
իր ամբողջ հանձարը քայց թիւրքահայ գաղթականներին
«անսխառնելու» նախագիծը մնաց կանգուն և ամէն օր
հրահանգներ է, որ տրուում են այս ու այն իշխանաւորին
մի կամ միւս նահանգապետից: նահանգապետները լաւ
գիտեն, որ հայրենակ գիւղերը և գաւառները գաղ-
թականները իրենց մէջ ընդունել չեն կարող: Չեն կարող
ոչ այն պատճառով, որ չեն ուզում՝ կամ թշնամաբար
են տրամադրած, այլ այն պատճառով, որ ուժ, միջոց,
հնար չունեն — հ ո ղ չ կ ա բ: Անհողութիւնը առանց
այն էլ կտորել է տեղական ազգաբնակութեան մէջը: Զից
տարիներ են արդէն, որ այդ անհողութիւնը աւելի
մահաբեր է դարձել ո ու ս դ ա ղ թ ա կ ա ն ի ր շ ա
ւ ա ն ք ի պատճառով, որոնք ներքին նահանգներից՝
կառավարութեան ձեռքով, ստիպողաբար քշուում են
դեպի Անդրկովկաս, կորցնելով իրենց ապրուստը, առող-
ջութիւնը, հանգստութիւնը և ապագան: Մի ժողովուրդ
դժբախտացնելու նպատակով կառավարութիւնը դժբախ-
տացնում է և մի այլ ժողովուրդ: Հային իբրև քաղա-
քական, ազգայնական մարմին սպանելու համար՝ ցարի
իշխանութիւնը անուղղակի սպանում է ուսին, դէնք
դարձնելով նրան, խլելով նրան իր երկրից, իր հողից,
որի վայ նա արժատ դրած մի մարմին է: Դա կրկնակի
չաքսորութիւն է, հրեշաւոր շարագործու-
թիւն, ծնած ճիւղային ուղիղների մէջ...»

Կանգնած է թիֆլիսի փողոցում ուս գաղթականը՝
մերկ, բորիկ, կեղտով քածկան, շօքապատած երկեսա-
ներով, անապատտան, նա աղբրում է, աղբրում է
հաց, շոր, փող, նանապարհածախը: Ինչ անվերջ են նրանք:
Քալիս են դարնան, գալիս են աշնան Ոստիկանութիւնը
չի օգնում, չի օգնում և կառավարութիւնը: Ինչով օգնելը

Քանաւորանից աւան դուստրի կէտը, մեծ մասը կտրաք-
ւած, «չենօղիկներին» արկոյն է մտած: Ինչպարենալ ախտի
օգնի հայրը, տեղացին, Ազգիսը ինքնին, որի հացը
հողը, տեղը խլելու է գալիս ուսու մեծօրիկը, կառավար-
ութեան այդ դժբախտ զօհը...»

Յալիս է կովկասեցին, օգնում է նա հրեշտին մկած
միջակակից գիւղացուն, սակայն էրբեմն, քաղաքա-
կան իր արտաճան գաղթական օրերին, ստուգում,
մարում է կարեկից սպին, թուլանում օգնող մարդը:
Ինչ ահա սրտմտութեան սակայնի տեսարանը հանդէս է
գալիս իր ամբողջ մերկութեամբ:

— Կորեք, հանգիստ թողէք մեզ: Ինչ էք մեր հողը,
մեր տունը, մեր տեղը խլելու, և դուռ ուղում էք, որ մեր
ձեզ հաց, փող, ապաստան տանք, կարենք չենք...»

Ինչ մեկնած ձեռքը մտում է ստուգած այդ անսխառն մերժ-
ման հանդէպ, այդ դատան իրականութեան շրթնաց, այն-
քան կարեկից երեկ կամ մի քանի օրում առաջ...»

Մ ար դ ա կ ե ռ ու լ թ իւ ն է այդ մարդատեսութեան
մի անիւնած տեսարան, ստեղծւած «չենօղիկներին» ձեռ-
քով, այն դժոխային մեքենաների շնորհիւ, որոնք իրենց
այլանդակ պտոյաների մէջ ժաշում են այն բոլորը, ինչ
բարձր է, ազնիւ, մարդկային, դնելով նրա անդ ձգտելի
և անհասնելի կրեքի մէջ, տառապանքն անշէջ քաւրան,
գազանը, փոխադարձ տառապանքն գժբախտացնող հնոցը...»

Ինչո՞ հայ գաղթականներ:

Ինչո՞ ուս գաղթականներ...»

Ինչ կը մնան այդպէս անօգնական, անտէր, անապաս-
տան այդ 50 հազար դժբախտները, որոնց քշել է սուլ-
թանը, որոնց քշում է և ցարը: Գիւղից գիւղ գաւառից
գաւառ, Կովկասից ներքին նահանգները, ներքին նա-
հանգներից դեպի զ օ Ր ա ն օ Յ ն ե Ր ը, ստեղծանապետի
ձեռքից գիւղապետի ձեռքը, որպէս զի հալին՝ ինչպէս
այրուղ մոմ, անհետանան ինչպէս քաւրան տաւած մոխիրը...»

Ինչո՞, ո՞ր յանցանքի, ո՞ր մեղքի, չարագործութեան
ո՞ր տեսակի համար: Նրա համար, որ մարտիրոս ժողո-
վըրդի այդ բեկորը չուզեց քր դ ա ն ա լ թ իւր-
քիայում և չի ուզում մ ու լ թ ի կ ա ն ա լ Ռուսաստա-
նում: Ով վարենի չէ, ինչպէս քիւրդը, նա տառել է
սուլթանին. և ով մեռած, սարուկ չէ, ինչպէս մուսթիկը,
նա տառել է ցարին:

Մոռացած այդ ճշմարտութիւնը՝ պատրիարքը սուլ-
թանին է դիմում:

Մոռացած այդ իրողութիւնը՝ կաթողիկոսը ցարին է
աղբրում:

Է. ԱԿՆՈՒՆԻ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ծ Ո Ւ Ր Զ Ը

ՓԻՒԱՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՆՄԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ Պէղալի-
նիստ խիզախ և յաղթական ընդհարումները քննադատութեան
վրձակներուն դէմ, անոնց արձամարանքը, որ «վրձեմնորումեան»
առնոր ղեցուհիի վը պէս դուրս կը պանայ չայստանի արհն-
կաշտերէն, իր բոլոր փառապանք ուժգնութիւնով, հայ ժողովրդին
պաշտուող դէպի իր հերոսները, որոնք

«Բոլոր մեր ցաւերը, բոլոր մեր քայքայուող սու օրերուն,
իրենց ներսի դէն մոլեգնաբար տուտակեցում»
արձագանք գտան աշխարհի շորս ծայրերը, աւտոնու հայրութիւնը

զաւակներուն թէ, ինքը կը յաղթէ, եթէ իր բազուկներուն վրայ ղնէ յոյսը, եթէ շարժի եւ ղէնք հայթայթէ իր թշւառ, բայց քաջասիրտ եղբայրներուն:

Տարօնի մէջ մեր ազգային հպարտութիւնը զգուղ ղէւ- րիքը, եկամ անգամ մըն ալ հայ ժողովրդին ներշնչեցին գորով, հաւատք ղէպի Յեղափոխութեան ազատարար դերը: Այնքան տառապանքներ ետքը, պատմութեան եւ իրականութեան առողջ ինքնատիպայութիւնը կուզայ փսփսալ մեր ականջին, թէ հայ ազգին բախտը աստուածներէն ու ղիւսնաագէտներէն չէ կախած, այլ մեր ափերուն մէջն է:

Շատեր կը սիրեն որ պօէրներու տա կ տ հ ք ր, կուսածեը Հայաստան իրիսաբար, համերաշխ կամբական կոնիւնըրով Հայաս- տանը գերեզմանը ղնելով թիւրք պաշխագուղներուն: Գաղափար մը որ ղեւար մէ, եթէ հայ հպարտսը բուպ մը գոնէ անդրա- դանար իր վրայ սրտի վեհանմն թըրոուում մը:

Հայաստանը իր աշխարհագրական դիրքով, ժորերով, խոր- խորաններով, հովիտներով, կիրճերով, լեռնային ձմուռներով, քարքուտներով, թաքստոցներով, անհուն ղիւրութիւնները կ'ընծայէ ֆէդայիներու իրենց քուր շարժումներուն մէջ, թէ յարձակո- ղական եւ թէ պաշտպանողական:

Հայերը՝ այնքան աղէտներէ, իորձանքներէ, յուսախաբու- թիւններէ ետքը, ղիւր է, ունեցան հիասթափութիւններ, լքումի ծանր օղ մը ղնչեց անոնց վրայ, որոնց քիչ Հնպատեցին հակայեղափոխական մաղձոտ քարոզները, վայնասունները: Բայց անողջ իողողութեան առջեւ, որ կը քրէ մտքերը եւ սրտերը, եւ որ կայր հեգնութիւնով մը կը շարունակի, հայ ազգը վեր կը պրկի նորէն, արիւթեան, կամքի եւ իտէպի հզօր առաքնու- թիւնով մը, կուելու արու գնտովութիւնով մը:

Տարօնը իր Սերըներով, հիանալի Մարգար վարժապետ- ներով, Գուրգէններով, որոնք առողջ ու քարի սերմը ցանեցին եւ ինքնապաշտպանութեան խրոխտ ոգին հասունցուցին հոն, կը պարտաւորէ իր հերոսներու քաջագործութիւններով, որ ամբողջ հայ ազգը հպարտ ցնցում մը ունենայ:

Առաքելոց վանքին մէջ Անդրանիկի հրամայական «Յայտա- րարութիւնը», կամբազուած անհրաւութեան եւ քմահաճ բոնա- պետութեան ղէմ բողոքող գաղափարական գինորի մը արժանի գիտակցութիւնով, նշան է թէ հայ ժողովրդը գիտէ իր ցաւերը եւ այն ղոժոխային պայմանները, որոնց մէջ կապրի ղարերէ իվեր. շատ լաւ կը ղանշայ ան սուլթանները ու սուլթանիկները, որոնց անձնիւրին պէտք է գատ գատ ղոհացում տայ:

Այլ Յայտարարութիւնը ուղղած է սուլթան Համիդին, ամենա- ղզելի մարդուն, որ մօրը փորէն ինկած օրէն ղէպէ քրիստոնեա- ները արիւնային ատեղութիւն մը մտուցած է, եւ որ, իր երկերը մոխիրի վրայ նստեցնելով, ղարպիկ ղիւսնաագէտի ղրի համբան սա ստացաւ: Հաւանքի մարգարէ ղլլաւու պէտք չեկայ երբ քիւրան պէյի սուլթանը, Շըլըզի պաթախանէին մէջ խողու- թիւններով մեծցած այլ անկիւրթ մարդը, կարդաց այլ յայ- տարարութիւնը, չի կըցաւ իր ազնիւ սրտի աղաւտութիւնները, հայայնքները ղթափել եւ հրամայել որ նոր շարդի ղրպիւրներ պատրաստին. չէ՞ որ այլ մարդուն համը քերանը մացած է ան օրերէն իվեր, երբ իր ոճրագործութեան պատրաստած վախերը, գնուորները կուղարկեր որ հայերը քնած, անգէն ու անգիտակ աշխատած ատենին, յանկարծակիի քերն ու խող- խողեն, որոնց առջեւ իր քերանը կը սրբէր, յայտարարելով որ չի կրնար իր ժողովրդին մոկեանութիւնը սանձահարել: Միայն թէ երջանիկ կալիֆան, նոյնիսկ ալլահի շուքին մէջ, չէր յաղողէր ամէն ինչ բողել, միշտ տակը բաց կը մսար, եւրօպացիներուն օսմանեան ղվայելի ու պարկեշտ քաղաքա- կրութեան... ղաշակը տալով:

Անդրանիկի Յայտարարութիւնը նախաբանն է այն եղելու- թիւններուն, որոնք լափող անէճքի պէս պիտի կրծեն թիւրքի սիրտը - եթէ ունի ղեւ սիրտ - եւ սուլթանը իր պալատի արիւ- նալիկ վնամաներով, պիտի ղընայ իր ոճիրներու պտուղը հանգիստ անգիստ վայելել:

Մեր թշւառութիւնը արգասաւոր պիտի ղլլայ հերոսներով, մէկը կը մտնի, երկուր կը ղնին: Մարգար վարժապետը կանխեցին, Գուրգէններ, Սերըներ նահատակեցին, Անդրանիկը ու անկիւրթ ֆէդայիները երկեցան հորիզոնին վրայ:

- « Ու ղեւ մայրերը կան, արգասաբեր ու հերարձակ,
- « Որ վերը, վրաններուն մէջը ղաշտավայրին,
- « Իրենց յուրթի ու լայն ու լուսաւոր կողերուն տակ,
- « Մեր վաղորդայնները փառաւորելու համար
- « Մոկեցին ղիւցագուղներու երկուցը կապրին...

Այս ամենան տողերը, քաղած «Իիւցագուղէն» փոքրիկ գրքիկէն - հիանալի եւ ուժեղ ղիւցագուղներով ղիւն մը - ներկած հայ ֆէդայիներուն, որոնք

« Իրենց փըրղ ախարներուն տակ հրաշէկ ղանակներ կը տրորեն

եւ « Որոնք կանցնին իղէպի գագաթներէն ազատարար խոյանքներով... արայրէ պատասխանը չէ՞ մեր արիւնարբու թշւառին անգոր ղիւցերուն եւ հայ ցեղին վրիժառու եւ անընձեղի կորովին մոնչիւնը միանգամայն:

Know how sublime a thing it is
To suffer and be strong

« Ի՞նչ վեր» քան է, տառապիլ եւ ղօրսաւոր մաւլ: Ամերակացի քանաստեղծին այս խօսքերը ղուգորդելով առա- ղինին կը խորհրդանիշէ գուցէ մեր պայքարի հոգեբանութիւնը, որուն մէջ արղէն կը տեսնենք մեր ցեղին, մեր ղոյութեան պզուական ղիծերը:

Մեր հայ գաղութներէն շատերը ղժբախտաբար, ազգային ղատի տեսակէտով, մեռածութիւններ են, քիչ շատ ազգային թելվաշ ամանութիւններու փաթաթներով մոխրացած. Հնդկատան, Շավա եւ մասուք Եգիպտոսը: Փարսաւորներու աշխարհին մէջ հայ գաղութը քայլաքայլ կը հետեւի Պօսին, իր սահմանա- ղրական, առաջնորդական, ղարոցական, թաղականային, ղասական եւ ամուլ հարցերով. իր ժամերը կանցնէ անուշ ղուլութեան մը մէջ, սքեքաւոր նեղոսի ափերուն վրայ, ղըլապատած ղարաւոր մեծափառ սերակներով, յիշատակարաններով, անասման անա- պատով, ու... գերեզմաններով, որոնց առջեւ Հայաստանի աւե- րածութիւնը կը կորսնցնէ կարծես իր նշանակութիւնը:

Հագիւ հագ պարբերական գով քամիները պ պրկեն անոնց շրգէն մօզի պէս թուլցած ղիւրերը ու հալած ուղեղները:

Անոնք որ յեղափոխական ղրարով կը մտնեն հոն, պղնձէ սաղաւարտներով երքծնի ղիւտոններուն պէս, շուտով կըզգան, որ իրենց նուբարներու, պէյերու աւատական երկրին մէջ են, որոնք իրենց յախտեանական ղախտը կը սիւռեն, ինչպէս սիւրբ- ները, հայ հասարակութեան վրայ եւ որոնց անձնիւր ղէստը կը կանոնաւորէ հայ գաղութին տրամադրութիւնը, ինչպէս նեղոսի ոտգման ղրանքները:

Յեղափոխական գործիչները այլ միօրինակ եւ ղլքոստ հայ վայրին մէջ, գրեթէ հիասթափ եւ չեզբրացած կը ման. չիկան հոն, թէ եւ ազատ միջավայր, մեծ ելեւէջներ, խրոխտ ստատա- նութներ եւ բողոքի սրտագին ղիւրեր, թէ եւ այլ երկերը մեծ թատր մը եղած ղլլայ մարդկային մտքի հոյակապ շարժում- ներուն, եւ ուր հին հեթանոս եւ նորաձիւն քրիստոնեայ աշ- խարհներու միտքեզականութիւնը իրարու հանդիպեցան:

Եգիպտոսը Հայաստանի համար քարոյական ու նիւթական շտեմարան մը եղած չէ, ինչպէս երքծնի եղած էր Հրէաստանի շտեմարանը եւ կարծես եթէ Մովսէս մը համարձակէր Կարմիր ղովէն անդին աւետեաց ղաշտերը ցոյց տալ անոնց շախտի վարանէին յիշել Եգիպտոսի սոխը սիւտորը: Հոն աւելի կը հետա- քրքրուին պատարարքարանի ղանապանի մը կամ հայ աղայի սուլթանէն պատանշանի արժանանային, քան թէ մեր հրատապ հարցերով: Ազգէկոյ ազատ հովանաւորութեան տակ եւ օտարոտի միջավայրի մէջ, որ կուտայ անոնց անտրտում ուրախութիւնը ու... արիւնեան ղգայապաշտութիւնը, անգոյն եւ կըրոնախոյ տարր մը կըպիկ ղանալ նեղոսի խորթ հովտին մէջ պարող հայութիւնը, ուր ազգային ղգացումը, ղնտանեկան ամանութի- թիւնները, հմայքը եւ անձնասիրութիւնը կը կորսնցնեն իրենց ղոյանականութիւնը. այլ գաղթավայրը, որ ամէն հաւանակա- նութիւնը ունէր մեր ղգայասիրութեան մարտկոցներէն մին ղլլաւու, անորոշ, պաղած նայաւծք մը, գուցէ արհամարանք մը ունի, ինչպէս Եգիպտոսի արձանները, այն արիւնարբ երկրին մէջ, որ «ան- հուն գերեզման» մըն է, ղատ Միշէի, եւ որուն ղակատագիրը «մոնչնիրու գորքն» մէջ մեհնադրօւմաձ էր:

Փարսաւորներու նովիտէն ղանանք Շանքիներու նոր աշխարհը. հոն կը գտնենք թարմ, աշխուժ եւ շահագրգռող հատած մը հայ ազգին, որ կը ղաւէ, կը վիճի, կը հայհոյէ... յանուն Հայաստանի եւ ազգային շահերու եւ որու մէջ Սամուէլ Սմայլը գանէր թերեւ «հնքօգնութեան» գեղեցիկ նմուշներ:

Միակ հայ գաղութն է, որ թէ եւ հին յոյների պէս մայր հայրենիքէն սքեքաւոր հուր չէ տարած հեռը-կըզգայ իր մէջ գործելու, բողոքելու նախաձեռնութիւնը եւ հայրենիքի ցաւկիշտը թարգմանելու անկեղծ ղաւանանքը ունի: Կըզգաս որ ազատ երկրի քաղաքացիական անարքիւնութիւնը կըպիկ մակրուել հայ արիւնին մէջ:

Պօսիթին ուր մարտակրօն «Ուխտաւոր հայրերը» Միացեալ Նահանգներու «Մայր Նահանգը» հիմնեցին - եւ իր ղրացի փոքրիկ Նահանգներուն մէջ, լեցուն են հայաստանցի ղաւակները, որոնք իրենց մայր հողէն վաստկած ուժերին օտար ղառայութեան սուլաս դրած են: Ուտըր, «հանրապետութեան սիրտը», Փրօվի- տէնս, Փիլատէֆիա, Փիթսպուրկ-ղոժոխային քաղաքը, Լին, Լօ- տէնս, Փիլատէֆիա, Փիթսպուրկ-ղոժոխային քաղաքը, Լին, Լօ- տէնս, Նիւ-հօրք, եւ ղեւ հեռուները, ես ինկած քաղաքներու մէջ, հայ աշխատաւորները, կարծես մոզական ազնեցութիւնով մը ականջ ղրած օղին ու հողին անհամբը լուրերու կըպասեն

իրենց ղեքախտ հայրենիքին, արծազանք կուտան անոր ցաւին, կը ծափահարեն Ֆէդայիին յաղթական քայլերը եւ զիտակցութիւնը ունին իրենց պարտականութեան, որ ոչ ուրիշ կը տեսնուի, եւ շին վախճար Այսպիսի պէս ովկէանի միւս ափէն իրենց բռնաշարժներով սպառնալ ստատածներուն ու հայրենիքի թշնամիներուն:

Պօթո՞քն հայ պատկառմանութեան պարտք եղած է, ինչպէս եղած է Ամերիկայի նախածնունդեան 11-ը (սենը), որուն շուրջը կը դառնար մեծ հանրագիտութեան բախտի անխել: Նոյն պատմական երեւոյթը կը նշմարի այսօր հայ գաղթականութեան մէջ, որ ազգայէն ծակատազրէն բաժին կը պահանջէ իջուացիորէն:

Նիւ-հորքի մէջ -- գեղեցիկ երեւոյթ մը -- կազմուած է «հայ ինքնապաշտպանութեան յանձնախումբ» մը, որ լուրջ հողի վրայ դուրս ափտի հերքելու է իր վերնատունին մէջ ամերիկեան ազատասէր ու հայասէր երեւելի քաղաքացիներ, եւ միահամուռ օժանդակութիւնով ափտի աշխատի Հայաստանի մէջ հայ ժողովրդին ինքնապաշտպանութեան մեղքները դիւրացնել, ի հարկին գէնք ու պաշար հայթայթելով հայ զինուորիին եւ հայ ֆէդայիին եւ որուն դէմ սկսած են քաղցիներ տալ յաւիտենական ղեկառնները: Մեր յեղափոխական կեանքին մէջ ցանկալի իրագործումներէն մին է, երբ պօշրները եւ յոյները իրենց ղեկավար օրերուն եւրօպական այդպիսի հաստատութիւններէ մեծապէս օգուտեցան ու կ'օգուտին:

Նոր աշխարհը, կրօնական յարանումութիւններու պէս, ունի իր քաղաքացի հայ կուսակցութիւնները, որոնց մէջ խառնիխուռն կը գործեն ամէն գոյնի մարդիկ. կան որ մէկ օրուան մէջ պատկերաւորութիւնէ յեղափոխական պետ դարձած են -- որովհետեւ նոր աշխարհին մէջ ամէն բան յանկարծական է -- կէս մարդերէն սուրբ հոգուն ազդեցութիւնով լման մարդիկ առաջ կուգան -- քրոստոս իջու վրայ հեծաւ, հիմա էջերն են որ քրիստոսի վրայ կը հեծնեն, պիտի ըսէր Հայնէ կամ ինկղրսու -- սլրտիներ, որոնք հիանալիօրէն շուռ կուտան սրեմին յեղափոխութեան ու հակա-յեղափոխութեան քարերը որ հոսանքներուն համեմատ, եւ ղեկ քանիսն'ը, որոնք «սովեթէն համարներէն» զգած, գացած էին Ամերիկա... անհաստատութիւն սորվիւ, կը տեսնենք թէ ինչպէս իրենց բոլոր շքեղութեան ու պերճախօսութեան դափնիներով, ալ ու ծակ պատգամներ կը նետեն, ամականներ կը շարտեն, կ'իմաստասիրեն պաղ քրտինք մտածումով մը, զուկնին փորձառութեան ժայռին վրայ սրած, եւ երբ ճիգ մ'ընեն իրենց սրտէն զգացած յեղափոխական սարսուռ մը արտայայտել, անպատճառ իրենց հակաուկորդը դուստան անանկուր հոգեկան պահանջը կը զգան կամ հայ ֆէդայիին երբեմն արձամարտու ու խօսք աչք մը նետեն իրենց... հերոսութիւնը ու քաղաքական շրջահայեցութիւնը ցցնելու համար:

Երբ առարարներու շքեղութիւնը քաղցրեցնուի հակաուկ, ամերիկահայերը, աւելի ու աւելի սերտներն կը քանան հայրենիքի աղաղակներուն առջեւ, կուգան հաւատքով փարձել հայրենիքի սուրբ գործին, խնամարձի տեսուր կամ յուսատու իրականութեան առջեւ, ոգեւորուի եւ գոտնալուրի հայրենիքի վտանգին մեծութեան դիմաց, երկնցնելով իրենց աշխատաւորի արի քաղուկը ու վրէժ-խնդիր հոգին յեղափոխութեան դրօշակին:

Մըթուած ազատութեան մթնոլորտի մը մէջ, արեւմտեան վերածնող հոսանք մըն է, որ կը թափանցէ մեր արեւնին մէջ, բաւատեալ յոյսերով եւ ծրագրով, երբ ուրիշ գաղութներ լուծեան մահացու դաւաճանութիւնը կը պահեն:

Աշխարհական ու հոգեւոր դասակարգին մէջ հետզհետէ կը թուլնայ -- դիմադրող կայր ուժը. կըզգաս որ Ս. Օգոստինոսի տեսիլը մը ըսած է անոնց «Առ ու կարդա»: Ամէնքը համոզուած են որ պատմութեան անսխալ օրէնքով, հայ ազգը եւս ճշմարիտ յեղափոխութեան փորձութեան բովէն պէտք է անցնի իր թնորութեան ժանգերէն սրբելու, իր էտէալի մեծութիւնը նւիրագործելու եւ իր գոյութիւնը ապառաժ հիմքերու վրայ դնելու համար:

Ամերիկայիցը իրենց բարեշքումը ծամընէ մէջ, յոյսի եւ եղբայրական բազուկը կ'երկնցնեն արի ու թշուառ Հայաստանին, որպէս զի օր մը, համակերպ ու արտասագին, Նիւ-հորքի շքերուն մէջ ընկղմած Հայաստանի ուղուամուտ տեսնելու կարօսը զգան ինչպէս Լօճի ֆէլօյի phantom ship-ը:

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

« Կ Ր Օ Ա Ր Մ Ե Ն Ի Ա »

(№ №. 4, 6, 7, 8)

№ 4. Կ Ի Ս Ա Ս Ե Ա Է Ա գրիհանուպօլսում կախածները: «Նրանց գործողութիւնները -- ասում է Բիլյառ -- մի տարատգոր դաս են ձգձգող դիւանապէսների եւ պետա-

կան գործնական մարդկանց համար, եթէ նրանք ընդունակ լինէին բմբռնելու այդպիսի գործողութիւնների նշանակութիւնը: Այլեւս Հայաստանում չէ միայն, այժմ հայ յեղափոխականները իրենց գործունէութեան վայր են դարձրել նաև Եւրոպան, ինչպէս որ արեւ էին նրանք 1896-ին, Բանկ մասոսմանի գրաւման ժամանակ, կան այդ յեղափոխականների մէջ գաղափարի մարդիկ, որոնք վճռած են իրենց ամբողջ կորույթը իբրոք դնել յօգուտ իրենց մտղվրդի. կան մշակներ, տարօրինակներ իմացական որոնք պատրաստ են իրենց անձն ու կեանքը զոհելու: Նրանց կատարելալ համաձայնութիւնը իրենց մակերգծայի ընկերների հետ յոյց է տալիս նաև որ նրանք պատրաստ են իրենց աշակցութիւնը տալ բոլոր այն մարտիկներին, որոնք կախ են մղում միևնոյն դահիճ-վիճակների պէս...

«Թող այժմ Գազանը անկեղ սայ կախադաններ թիւրքերի բողոր քաղաքներում. թող քաղաքակրթւած ու քրիստոնէայ պետութիւնները շարունակեն պաշտպանել զազդելի Մարդասպանին. փոյժ չէ, դ ա ղ ա փ ա Ր Է Կ Ի Ն ո պ ա ն ու լ յ »:

Նոյն համարի մէջ զետեղած է մանրամասն արձանագրութիւնը այն հարցապնդումի, որ հայասէր պատգամաւոր Վ ա ն Կ օ Լ վերջերս արել է Տօլանդական պարլամենտում: Ապա՝ «Միօնիստական կոնգրէսը և սուլթանը» -- յօդած նշանաւոր հրէագրի հրապարակախօս Բ է Ր Ն ա Ր Լ ա Վ ա Ր Ի: Այդ յօդածը գրած է Միօնիստական կոնգրէսի յայտնի հեռագրի և հայ ուսանողների ձևակերպած որոշումի առթիւ:

* * *

№ 6. -- Խմբագրական Ֆրանսիս դը Պրէսանս է Ի՝ «Ազգարարութիւնից յետոյ»:

Յօդածագիրը խօսում է երկու տեսակի «գիւտանագիտութեան» մասին՝ պաշտօնական և յեղափոխական գիւտանագիտութեան: Առաջինը այն է՝ որ բազմում է կանաչ սեղանի շուրջը պրօտօֆօրներ գրելու համար, որ այնքան թանկ է նստում և համարեա ոգինչ չի շինում: Երկրորդը չի երևում հրապարակի վրայ, այլ գործում է գաղտագողի և խօսում է ցած ձայնով...

«Երբ կը գրեն վերջին դարու վաւերական պատմութիւնը, այն որ չի կազմուած պաշտօնական դօկումենտներից եւ պետական ստերից, այն ժամանակ կը պարզուի թէ ինչ դեր են խաղայիլ Իտալիայի «Յարութեան» եւ գերմանական միութեան կառուցման մէջ կալուրներ, վիկտոր Էմանուէլներ, Բիսմարկների ու Մոլպիէների կողմին այդ մասը ու անխօս դերասանները, կորած խաւարի մէջ, թաղած անանուն ամբողջ ծոցում -- որոնք սեւէ վճռական ժամին եղել են գործօն ու մը, եղել են արարող պատճառը այն մեծ անցքերի, որոնց վկայաւոր (patentés) հերոսները եղել են միայն նրանց արձանագրողներն ու նրանցից շահուողները:

Այս գիտնալով հանգրձ ընաւ գիտաւորութիւն չունինք պախարակելու ամենայնեղափոխական կուսակցութիւններին անպատ, որոնք իրենց գտտի շահն աչքի առաջ ունենալով՝ մանոււ մ են զազանի բանակցութիւնների մէջ եւ ճիգ են թափում մի քայլ անել տալու պաշտօնական դիւանագիտութեան: Երբ վերջին ամառը Հայաստանի լիազօր ներկայացուցիչները վայրկեանը բարեպատեն կարծելով փորձեցին գերապիս մի գիտում անել կառավարութիւններին նրանց ուղարկութիւնը 6 Արդ յօդակում վրայ հրաւիրելու համար -- նրանք հնազանդուում էին զգայմունքներից ամենաօրինաւորին եւ ամենայնպիսիին:

Նրանք չեն կարող անտարբեր մնալ, երբ հնարա-

ւորութիւն կայ պետութիւններէ համերաշխ գործողութեանը ըստ կարելոյն հեռացնել անաւոր մի ճգնաժամի ցնցումները իրենց ժողովրդից: Այդ մարդիկ չեն խաղաւ մի յեղափոխութեան հետ, նրանց միան ու արիւնն է, նրանց հայրերի ու մայրերի, կանանց ու աղջիկների միան ու արիւնն է, որ հողում է այդ օրհասական կուռ ծախքերը:

... Հայերը հանդիսաւոր ազգարարութիւն արին եւ քաղաքային, յորդորելոյն նրան կատարել իր պարտականութիւնը... Այդ օրից մի նոր շրջան է բացուում... Ասացէք խնդրեմ, արդեօք խոհեմ, զգուշ Ինկլասէն ճիշդ միեւնոյնը չէ՞ր յայտնում պարլամենտի առաջ, ինչ որ ասել էր շէֆ Անդրանիկը Ս. Առաքելոյ վանքում, առաջնորդ Սոսրով Բերկեանի ներկայութեամբ... (Պիէսանտէ ակնարկում է մինիստրի այն նշանաւոր խօսքերի վրայ, որոնք հաստատում էին հայկական յուզումների («ճակատագրական») լինելը): Մի լսան, որ Եւրոպան այժմ պիտի լսէ ու հասկանայ, այդ այն է, որ հայերը արևել են իրենց կրեք ազգարարութիւնները եւ որ նրանք իրաւունք են համարում անցնել գործողութիւններին: Իւրանագրութիւնը ուզում է կարծէք ասպացուցանել նրանց, որ նա այն ժամանակ միայն հաշի կառնէ նրանց (հայերի) ամենահամեստ պահանջները, երբ նրանք կը խառնուին նրա հանգստութիւնը այնպիսի ձեռնարկներով, ինչպիսին էր Բանկ Օտոմանի գրաւումը 1896-ի օգոստոսին...:

Թող պահպանողական բուրժուազիայի փարիսեյիները նախորդ դատապարտեն այդ տեսակ միջոցները: Իսկ ես, որ սովորել եմ պատմութիւնից, որ չկայ մի կուսակցութիւն, որը իր ժամանակին, յողթանակիլու համար դիմած չլինի կոպիտ ուժին,—ես բանի տեղ չեմ դնի այդ կեղծաւոր բողոքները...:

Պէտք է ընդունենք անկեղծօրէն, որ հայերը, ինչպէս եւ Համիդի ճանկերում գալարաող բոլոր միւս ազգութիւնները մշտնջենական պատերազմական վիճակում են դսնում այդ վեհապետի հետ եւ, կարծում եմ, ոչ ոք չի պնդի, թէ պատերազմի իրաւունքը, որը թող է տալիս 235,000 զինուոր ունեցող Անգլիային՝ 12,000 բոյեթներով դէմ մղած իր անաջող կուռ մէջ բռնաբարել միջազգային իրաւունքը: գերիներին կոտորելով եւ չկուողներին կղզիացնելով—ոչ ոք չի պնդի, որ այդ պատերազմի իրաւունքը արգելում է հայերին ամենաազգայն միջոցներ՝ ձեռք առնել Երզրզ Բիսուկի բռնակալի դէմ: Եւրոպան, մերժելով գործել, խօսքը տուել է յեղափոխութեան. ի՞նչ կը լինի սրա առաջին խօսքը):

«Սիսամսեակում» Պիէռ Քիլառ խօսում է այն ուշագրաւ միջնադէպի մասին, որը ծագեց Ֆրանսիական պարլամենտում՝ պատգամաւոր Մարսէլ Սամբայի Գեղասէին ուղղած հարցումի առիթով: Սամբա հաստատում էր, որ Ֆրանսիան շտապով յետ կանչեց իր նաւերը Միտլենից՝ Ռոսաստանի ճնշման տակ, և որ ռուսաց դիպլոմատիան այդ ճնշումով նպատակ ունէր արգելել Ֆրանսիային՝ հայկական խնդիրը յարուցանելու:

«Պիւ Արմէնիայի այդ համարը պարունակում է նաև Իլդէ Փրապանի կոչը, «Մայիսեան մէմօրանդումի» մի մասը և կարեւոր թղթակցութիւններ Տաճկաստանից:

* *

№ 7. — «Հայ պատերազմների յայտարարութիւնը օսմանեան ազատականների համաժողովում»:

«Սիսամսեակը» երկարօրէն այդ համաժողովի վճայ ծանրանալուց յետոյ՝ կուռ յորդոր է ուղղում՝ մասնաւորապէս հայերին և առաջին անգամը թելադրում է Ֆրանսիացիներին՝ նպատակը հայկական ինքնապաշտպանութեանը, կազմակերպելով այդ անունով մի կոմիտէ, որպիսին արդէն կազմակերպած է Ամերիկայում:

Հետևում է Պիէսանտէի ժընէվում արած բանախօսութեան արձանագրութիւնը և ապա թղթակցութիւններ Հայաստանից ու Մակեդոնիայից:

* *

№ 8. — «Սերբիայի համար». Վիկտոր Հիւգօյի մի սրտաուռ ամբաստանագիրն է դա, ուղղած եւրոպական պետութիւններին՝ 1876-ին Սերբիայում կատարած թիրաքական գազանութիւնների առիթով:

«Կարիկէլ Հանուստ — ասում է «Պիւ Արմէնիայի» խմբագրութիւնը — համարձակել է Պանթէօնում ներդրող արտասանել Վիկտոր Հիւգօյին: Մենք կարծում ենք աւելի արժանաւոր կերպով յիշատակել բանաստեղծի հարիւրամեակը, վերադարձնելով այն էջերը, որ նա գրել է 1876-ին, «Եւրոպական սարսափները միջոցին Բուական է «Սերբիա» բառը փոխարինել «Հայաստան»-ով եւ այս էջերը կերտւան ձեռք իր կրէկ միայն գրած: Եւ պետական մարդիկ, որոնք դժկամակութեամբ ու կէս-բերան փառաբանում են չիւգօյին, դեռ էլի կը մեղադրէին նրան չարազանցութեան մէջ ու կը վիճէին զոհերի քանակութեան մասին»:

«Սիսամսեակ». Քիւրք ազատականները ի ն. դա մի ազգու կոչ է, որ Քիլառն ուղղում է երիտասարդ թիրաքերին, հրաւիրելով նրանց՝ ձեռք վերցնել սին Ֆրազներից, հետեւել հայերի օրինակին և ջարդի ու տէնօրի ուժեղման ընդդիմադրել յեղափոխական կուռը:

Հետևում են թղթակցութիւններ, մահադատ դօկտոր Սիբիուլի (քիւրք) և Մայիսեան մէմօրանդումի շարունակութիւնը:

* *

Չենք կարող գէթ քաղածօրէն չբերել այստեղ Ֆրանսիական պարլամենտի անդամ Ռուանէի լուրը, ընդարձակ բովանդակալից մի յօդուածը, որ հրատարակեց *La Petite Republique*:

... «Այսօր տակաւին չէ գոցած ազգային միութիւնների գոյացման շրջանը: Թէպէտե Աւստրո-Ունգարիայում ու Բալկաններում ժողովուրդների ձգտումները դէպի ազգային անկախութիւն՝ չունին վաղեմի օրերի խոռվայոյց, յեղափոխական բնաւորութիւնը, այնուամենայնիւ ազգայնական պահանջները յարատւում են...»

«Օսմանեան կայսրութիւնը թատր է ներկայանում միւնոյն ազգայնական խմորումների, որոնք այնքան երկար ժամանակ այնպիսի են Բալկանեան թերակղզին: Այդտեղ ազգային պրօբլէմը դեռ բարդանում է կրօնական խնդրի շնորհիւ... Փոքր Ասիայի ժողովուրդները պահպանել են բնազդօրէն մի հողի վճայ, որը երբեմն առաջին օձախն էր արեւմտեան քաղաքակրթութեան, իրենց անցեալ մեծութեան յիշողութիւնը...»

«Չարմանայի չէ, ուրեմն, որ վերջին հարիւր տարւայ ընթացքում ազգութիւնների զարթնումը շեշտում է Արեւելքում ևս, ինչպէս Արեւմուտքում: Տեսանք ազգութիւններ, որոնց արդէն մարած էին կարծում, և որոնք յարութիւն առան առաջին գրոհից...»

«Արեւելեան բոլոր ազգերի մէջ, որոնք արտասովոր կենսունակութեան ապացոյց են տւել, ամենահամակրելին հայ ժողովուրդն է: Ամենահամակրելին՝ թէ այն երկարատեւ մարտիրոսութեան պատճառով, որ նա կրել է առանց խորտակելու և թէ այն պատասխանատուութիւնների պատճառով, որ ունի Եւրոպան այն ողբերգական

